The grogh [Angel of Death] entered the house and everybody looked
at the son-in-law.*

[i.e. Sons-in-law are unwanted.]

Հարսն ու փեսին՝ լոյսը փուշ ա, մուլին անուշ ա:

A bride and groom hate sunlight, they love the night.

Փեսայ ու քենի, քէպապ ու գինի:

Brother-in-law and keni, are like kebob* and wine.*

[i.e., There is an affinity between a man and his wife's sister.]

Նոր փեսէն անուշ կ'ըլնի, նոր հարսը՝ սիրովի:

When newly wed, a son-in-law is sweet, a daughter-in-law dear.

Փեսայ, ուշ է եկէ, անուշ է եկէ:
A son-in-law who comes rarely comes dearly.

Անարժան փեսէն աներանց ունեցածը իրանը գիտի:
A worthless son-in-law thinks his in-laws' wealth is his own.

Զոքանչի սիրած փեսին աները կ'ատէ:
A father-in-law hates his wife's favorite son-in-law.

Փեսէն զոքանչի սիրեկանն է:
The son-in-law is the mother-in-law's darling.

Փեսէս տուն եկաւ, երեսս գոյն եկաւ:
My son-in-law showed up, my face again lit up.

Հարսը մէրանցը, փեսան՝ աներանցը:
A daughter-in-law sides with her parents, a son-in-law with his in-laws.

[i.e., Married daughters hold on to their parents; and they predispose their husbands to the same.]

Կնքահայր **Godfathers**

Կնքելու տէրն եմ, հո ապրեցնելու էլ տէրը չեմ:
I am willing to baptize (the child), but not to keep (him).
[Used by someone who shirks excessive responsibilities.]

Քաւորը փոխի, մեռոնը կոխի:
Changing the godfather is tainting the chrism (holy oil).

Ես հօրն ու մօրը, եա ծուռ ու մուռ կնքահօրը:
(S/he resembles) Either the mother and father, or the odd godfather.
[Referring to the bond that exists between the godchild and his god-parents.]

Կնքահայր ըլլալը թանգ է, անուն դնելը բան չէ:
Being a godfather is costly, just giving a name costs nothing.

Ամէն գաթայ էլ գաթայ է, սանամօրը գաթան քրքշան է:
Every gata is a gata, but the sanamayr*'s gata is crispiest.*

[Referring to the godfather who extolls his godchild's mother above all other women]

Քաւորին դրին տանուտէր, առաջ սանամօրը դրեց էշին:
They put the godfather in charge, he seated the sanamayr on the donkey first.*

[Expressing the godfather's fondness of his godchild's mother.]

Հարսանիք Weddings

Հարսնետունը առանց լաց չի լինի, մեռելատունն առանց խնդում:
There is no wedding without tears, and no funeral without cheers.

Շուտ կարգուողը, շուտ ակրատ (նախաճաշ) ուտողը չի փոշմանի:
He who marries early and has breakfast early will have no regrets.

Հարսնոցին խելք պէտք է, հոգու հացին՝ ուժ:
For a wedding you need brains, for a wake meal – lots of strength.

Թէզ ճամբայ ելնողն ու թէզ կարգուողը չեն փոշմանի:
He who sets out early and marries early will have no regrets.

Ո՛չ հարսանիքն է պակսում, ո՛չ սուգը:
There is no shortage of weddings, nor of funerals.

Պսակ թէ մահ տարիք չգիտի:
Death and marriage do not know age.

Մահը հօրս, հարսանիքն աղբօրս:
The wake for my father, the wedding for my brother.

Հէմ լանք, հէմ երթանք:
Let's cry, and still go.

[A bride cries as part of the ritual when she leaves her parents' house. Used when eagerness must be hidden.]

Օժիտ Dowry

Կնկայ երեք բաժինը լաց է, մէկն էլ չորեղէն:

A woman's dowry is three-parts tears and one-part clothes.

Աղջիկ ունեցող մօր մէկ ձեռքը ծոցը կ'ըլլայ:

A girl's mother has to keep one hand on her chest.

[Message: The costs of a girl's dowry are endless.]

Աղջիկն օրեկան, բաժինքը տարեկան:

The girl is one day old, her dowry one year old.

[i.e., The dowry should grow faster than the child.]

Մօր անունը, աղջկան օժիտ:

The mother's name is the daughter's dowry.

Կնկայ բերած փողը դռան զանգակ ա, անց ու դարձ անելիս, ճակատիդ կը դիպչի:

The money which your wife brought (as a dowry), is a bell over your door; it hits your forehead every time you go in and out.

Կնկայ բաժինքով մարդ չես դառնայ:

Your wife's dowry won't make you amount to anything.

Կնկայ բերած փողը մայեա (դրամագլուխ) չի դառնայ:

The money your wife brought in cannot become capital.

[i.e., You cannot make profit from your wife's dowry.]

Կնկայ բերած փողը փողութիւն չի անի:

The money your wife brought in cannot be used as regular money.

Ծէ՛հէգով (օժիտ) հարսը կ'ուտի հէ՛մ իրեն բերածը, հէ՛մ էրկանը դատածը:

A bride with a dowry will spend both her own and her husband's money.

Բաժինքը մաշ, ինքը դումաշ:

Her dowry will fade away, her goodness will stay.

Լաւը բաժին կ'ըլլայ գէշին
The good go to the bad

Ափսո՛ս չաքար, շան բերան:

Too bad, the sugar is in the dog's mouth.

Շերամբն ընկէ շան բերան:

The silkworm ended up in the dog's mouth.

Աղէկ մսի կտոր ա, ի՛նչ անեմ շան բերանն ա:

It is a good piece of meat; alas, it is in the dog's mouth.

Լաւը վատին, վատը լաւին:

The good to the bad, the bad to the good.

[i.e., The good never finds its match.]

Լաւ տանձը արջն ա ուտում:

It's the bear who eats the good pear.

[i.e., Unworthy men marry the best girls.]

Աղջիկը երկնքից ըլնէր, ում ձեռը հասնէր, նա առնէր:

A girl should be in the sky; to wed her one should reach her up high.



Chapter 4

ՄԱՐԴՈՒ ՆԿԱՐԱԳԻՐԸ HUMAN CHARACTER

Themes

Խոնարհ և համեստ	77
<i>Humble and modest</i>	
Խելացի և յիմար	77
<i>Wise and foolish</i>	
Անամօթ, անզգամ, անառակ	80
<i>Shameless, insolent, obscene</i>	
Անդաստիարակ, անկիրթ	80
<i>Ill-bred, uneducated</i>	
Անհասկացող, անհաղորդ	81
<i>Dense, stupid</i>	
Անհոգ և անտարբեր	82
<i>Careless and indifferent</i>	
Անպէտ, անչնորհք	82
<i>Good-for-nothing, unfit</i>	
Անտեղեակ	83
<i>Ignorant</i>	
Անտնտես, չռայլ	84
<i>Improvident, wasteful</i>	
Բարկացկոտ	85
<i>Ill-tempered</i>	
Եսամուլ և շահասէր	85
<i>Egocentric and profit-seeking</i>	
Երախտագէտ և ապերախտ	87
<i>Grateful and ungrateful</i>	

Երես առած, չփացած և աներես	88
<i>Spoiled, pampered, intrusive, impertinent</i>	
Երկերեսանի, կեղծաւոր և շողոքորթ	89
<i>Two-faced, deceitful and hypocritical</i>	
Հաւի յարգը չիմացող	90
<i>Unable to appreciate the good</i>	
Մնափառ	91
<i>Vain</i>	
Ծուլ, անբան	91
<i>Lazy, inactive</i>	
Յամառ	93
<i>Stubborn</i>	
Կծծի և ագահ	93
<i>Stingy and greedy</i>	
Ջրիակեր եւ տգրուկ	95
<i>Parasitic and freeloading</i>	
Ճարպիկ ու հնարագէտ	95
<i>Skillful and resourceful</i>	
Անկղբունք և յարմարուող	96
<i>Lacking principles and conforming to others</i>	
Մէջընկան	96
<i>Meddlesome</i>	
Շատախօս	97
<i>Talkative</i>	
Դժուարահաճ և բծախնդիր	98
<i>Fussy and meticulous</i>	
Որկրամոլ, շատակեր	98
<i>Gluttonous, voracious</i>	
Չար, դաժան, չկամ	99
<i>Nasty, cruel, unkind</i>	
Չհաւան, պարծենկոտ եւ գոռոզ	100
<i>Overbearing, boastful and arrogant</i>	
Արժանաւոր եւ անարժան	103
<i>Worthy and unworthy</i>	
Վախկոտ	103
<i>Coward</i>	
Անազնիւ, անխտահանի	104
<i>Dishonest, untrustworthy</i>	

Խոնարհ եւ համեստ Humble and modest

Բարատու ծառը գլուխը կախ կը գցի:
The fruit-bearing tree will bend its head.

Բերան ունի, լեզու չունի:
Some have a mouth, but no tongue.
[About humble people.]

Բարատու ծառին քար գցող շատ կ'ըլլի:
Many will stone a fruit-bearing tree.
[i.e., A worthy person will always be criticized.]

Խելացի եւ յիմար Wise and foolish

Գիտունի հետ քար քաշի, անգէտի հետ փլաւ մի՛ ուտի:
Carry stones with a wise man, don't eat pilaf with a fool.*

Լաւ է գիտունին գերի, քան անգէտին սիրելի:
Better to be a wise man's slave than a fool's favorite man.

Գիտուն մարդը լացացնելը լաւ ա, քան անգէտը ծիծաղացնելը:
Better to make a wise man cry than a fool laugh.

Գիտուն մեղաւորը լաւ ա, քանց թէ անգէտ արդարը:
A wise sinner is better than an innocent fool.

Յիմարը տալիս է, խելօքն առնում է:
The fool gives, the wise man takes.

Գժին բանի դիր, հետը գնա:
If you put a fool to work, go with him.

Գիժն ու հարբածը մէկ ա:
A fool and a drunkard are two of a kind.

Խելքը տարիքին մէջ չէ, գլխուն մէջ է:
Brains are not in the age, but in the head.

Խելքը մեծ ու պզտիկ չի հարցներ:
Brains don't ask young or old.

Խենդինն ուտենք, խելօքինը՝ պահենք:
Let's use up the fool's, and save the wise man's.

Խելօքի բեռը խելին չալակը:
The wise man's load is on the fool's back.

Անխելքի չուանով հոր մի՛ մտնի:
Don't climb down a well on a fool's rope.

Խենդը քուն, բախտն արթուն:
The fool is asleep, his luck is awake.

Խենդը տասը փարա գցեց ծակը, քառասուն տուաւ հանեց:
The fool dropped ten pennies down a hole, spent forty to fish them out.

Խելին գլուխը չուտ չի ճերմկի:
A fool's hair won't turn grey fast.

Բանը խելքով կ'երթայ առաջ:
It's the brain that keep things going.

Խելքը լաւ է, քանց դովլաթը (հարստութիւն):
Brains are better than wealth.

Աստուած որ ուզում ա մէկի տունը քանդի, առաջ խելքն ա առնում:
When God wants to destroy a man, he first takes away his brain.

Ո՛չ խելօքներէ հեռանաս, ո՛չ ալ խենդերուն մօտենաս:
Don't move away from wise men, nor approach the fool.

Գտակը մենծ, տակը դատարկ:
A big cap, empty underneath.

Մինչեւ խելացին բոպկցաւ, ծուռն զգետ անցաւ:
By the time the wise man took off his shoes, the fool crossed the river.

Գլուխը հաստ, ծուծը բարակ:
His head is thick, his brain is thin.

Գիժը մի քար գցեց հորը, հազար իմաստուն չկարացին հանել:
The fool threw a stone into the well; a thousand wise men couldn't get it out.

Խելք որ բաժնեցին, գացեր էր մարագ (հարդանոց):
When brains were distributed, he was in the hayloft.

Գժի ջաղացքը Աստուած կ'աղայ:
It's God who makes the fool's mill run.

Գժի աչքումը խելօքն էլ գիժ կ'երեւայ:
In the eyes of the fool, wise men seem foolish too.

Գժի հետ գիժ չեն լինի:
Don't become foolish with the fool.

Գիժը խելօքին մասխարա կը գցէ:
The fool makes fun of the wise.

Գիժը չի ամաչի, գժի տէրը կ'ամաչի:
The embarrassment is not for the fool but for his master.

Խելաւին կոտոշ չի բուսնի:
Fools don't grow horns.
[i.e., Foolish people have no visible marks.]

Խենդին կովն ա կորեր, խելօքին խրատ է եղեր:
The fool lost his cow, the wise man learned from it.

Խելառն որ չըլնի, խելօքն ապրիլ չի:
If not for the fool, the wise man couldn't make a living.

Շատ խելացին ծռուն աղբէր է:
Too much intelligence borders on stupidity.

Մինչեւ խելօքը միտք անի, գիժը տղին կը պսակի:
While the wise man thinks it over, the fool marries off his son.

Մինչեւ խելօքը մտածի, գիժն իր բանը կը տեսնի:
While the wise man reflected, the fool got what he wanted.

Անմիտը միշտ զժբախտ չի մնար, և ոչ իմաստունը՝ բարեբախտ:
The fool is not always unlucky, nor is the wise man always lucky.

Խելք ու տարտ չունեցողը երկար կ'ապրի:
He who has no brain and no worries lives long.

Նայէ որ իմաստուն ըլլաս, բայց տգէտ երեւնալ սորվիս:
Make sure you are learned, but learn to look ignorant.

Անամօթ, անզգամ, անառակ ***Shameless, insolent, immoral***

Ո՛չ Աստծուց կը վախենայ, ո՛չ մարդուց կ'ամէնայ:
Neither afraid of God, nor ashamed of man.

Անամօթ մարդը, օխտը (եօթը) չապիկ ունի, մէկը վրադ կը նետէ:
An insolent person has seven shirts, one he will throw on you.

Ամօթը ամէցողի համար է:
Shame is for those who know shame.

Անամօթ մարդի երեսը թքեցին, ասեց. անձրեւ է գալիս:
They spat in the shameless man's face; he said: "It's raining."

Ճարպիկ գողը տանտէրը կը բռնէ:
A skillful thief nabs the landlord (as a thief).

Եկաւ դրսենին, դուրս ըրաւ գներսինին:
The outsider came and kicked out the insider.

Անդաստիարակ, անկիրթ ***Ill-bred, uneducated***

Էշ կերել է, էշ մեծացել:
He ate like an ass, he grew up like an ass.

Այբը տեսնելիս, մարդակ կը կարծէ:
He sees an "A" and thinks he sees roofbeams.

Փորը ճեղքես նէ, այբ մը չ'ելլեր:

If you slit open his stomach, not even an Ayb would come out.*

[About a person deprived of education.]

Անհասկացող, անհաղորդ Dense, stupid

Իմացողին մէկ, չիմացողին՝ հազար:

For the bright – say it once; for the dumb – a thousand times.

Գիլի գլխին աւետարան կարդացին, ասաւ, թէ՛ք արէ՛ք, ոչխարը գնաց:

They preached to the wolf (not to devour the sheep); he said, “Hurry up, the flock is leaving (the pasture).”

Ասողին լսող է պէտք:

A speaker needs a listener.

Հասկացողին մին ասա, չհասկացողին՝ հա՛ կաց, հա՛ ասա:

To the brainy – say it once; to the dense – say it many times.

Խելօքին մին, անխելքին՝ հազար ու մին:

To the clever, once; to the dummy, a thousand and one times.

Իմացողին սազ, չիմացողին զուռնէն էլ հերիք չի:

For those who listen the saz is enough; for those who don't, even the zurna* is not enough.*

Հէշտ է քարին խոտ բուսցնել, քան թէ քեզի խօսք հասկցնել:

It is easier to grow grass on stones than to teach you reason.

Անճրեւն ի՛նչ անի քարին, խրատն ի՛նչ անի չարին:

What can rain do to a stone, and counsel to the evil?

Սեւը սապոնն ի՛նչ անի, խեւը խրատն ի՛նչ անի:

What can soap do for the dark-skinned, advice for the thick-skinned?

Կոյրի առաջ հա՛ դու ճրագ վառի:

What's the use in burning a candle in front of the blind?

Անհոգ եւ անտարբեր Careless and indifferent

Գիժը գնաց հարսնետուն, ասեց. «Էստեղ լաւ ա քանց մեր տուն»:
The fool went to a wedding, he said: "I like it here more than in my house."

Առարզ (անզգայ) մարդուն ամէն օր գարուն է:
To the unfeeling, every day is a spring day.

Գժի համար ամէն օր Նոր Տարի ա:
To the fool, every day is New Year's Day.

Գժի համար ամէն օր Զատիկ ա:
To the fool, every day is Easter.

Գժի համար ամէն օր հարսանիք ա:
To the fool, every day is a wedding day.

Առարզ մարդը շատ կ'ապրի:
An unfeeling person lives long.

Ականջին մէկէն կը մտնէ, միւսէն կ'ելլէ:
It goes in one ear and comes out the other.

Անպէտ, անշնորհք Good-for-nothing, unfit

Մարդ կայ մարդ ա, մարդ էլ կայ էշոց վատ ա:
Some people have class, others are worse than an ass.

Իշու մարիֆաթը (շնորհք) զուալն է:
Braying is the donkey's only talent.

Մարդ էլ կայ, մարդակ էլ:
Some are people, some are roofbeams.

Կարիճին ասին, կիճդ դեղ ա, խոր խրեց:
They told the scorpion: "Your sting is a remedy"; he stung deeper.

Ո՛չ թփելու ա, ո՛չ էլ կուլ տալու:
He is neither to be spit out, nor to be swallowed.

Իշուն զուոցին ըսեր են. «Ձայնդ անսպա՛ռ.» ալ զուոցը չէ կտրեր:
They said to a braying ass: “What a beautiful voice!” He hasn’t stopped braying ever since.

Թէ օրհնեմ, օրհնելու չի, անիծեմ, անիծելու չի:
He is neither to be blessed, nor to be cursed.

Ոտը դրած տեղը կը չորանայ:
Wherever he steps, it withers.

Կոխած տեղը չայիր (մարգագետին) չի բուսնիր:
Wherever he steps, no pasture grows.

Ջուրը գացող, ծառաւ դարձող:
He goes to the well and comes back thirsty.

Ունքը սրբած ժամանակ աչքը կը հանէ:
While wiping his brow, he plucks out his eye.

Անբաշարին ջուսլը (պարկ) դրին, ոտները դուրս մնաց:
They put the clumsy man into the sack; his feet jutted out.

Բարեւ տուողին էչը կը սատկի:
If he greets a man, the man’s donkey dies.

Իր տանը կրակ, ուրիշին ճրագ:
To his own, a (raging) fire; to strangers, a (shining) light.

Անտեղեակ Ignorant

Շուաքի կուժը, ի՛նչ գիտէ արեւի ուժը:
What does a pitcher standing in the shade know of the sun’s power?

Լսել է Բաղդադ խուրմա կալ, չի գիտեր ինչպէս կ’ուտեն:
He knows of dates in Baghdad, but knows not how to eat them.

Ով տուն չէ շիներ, գիտէ սիւնն ի մէջն է բուսեր:
He who has never built a house thinks the pillar grew in it.

Չտեսին տղայ եղաւ, բռնեց ճուճուլը կտրեց:
To a bumpkin a son was born; he went and castrated him.
[Said about people who out of ignorance act stupidly.]

Ես ասում եմ ներքինի եմ, նա ասում ա, քանի՞ տղայ ունես:
I am saying: "I am an eunuch"; he is asking how many children I have.

Էշին ռեհան կը տան, որ հոտ անի, բերանը կը տանի:
They give the donkey the basil to smell, he takes it in his mouth.

Էշի ականջում քնած է:
He is sleeping in the donkey's ear.
[Said about people who are unaware of what goes on around them.]

Անտնտես, չռայլ Improvident, wasteful

Մի օր բարի-բարկենդանք, մի օր անօթի սնգսնդանք:
One day – feasting, another day – fasting.

Շափ-չափ կ'ուտեն, չաբթով կ'աչեն:
They eat like pigs, then starve for weeks.

Գդալ-գդալ ժողուեցի, չերեփ-չերեփ ցրուեցի:
I saved it by the spoon, I spent it by the scoop.

Դատիմ, դատիմ, տամ շներուն:
I saved it day by day, to give it all away (to the dogs).

Առաջ կ'ըլնես ձեռնաբաց, վերջը կ'ըլնես գլխաբաց:
First you are open-handed, then you are bare-headed.

Ամէն օր սիւսլի քալողը, կիրակի օրը հագներէք չունի:
He who dresses up every day finds nothing to wear on Sunday.

Տալով, տալով, ծովն էլ կը հատնի:
By giving and giving, even the ocean will run dry.

Բարկացկոտ *Ill-tempered*

Բարկացող մարդը շուտ կը ծերանայ:
Ill-tempered people grow old fast.

Բարկութեամբ ելնողը վնասով կը նստի:
He who rises in anger sits down in injury.

Թունդ քացախը իր ամանը կը ճաքացնի:
A strong vinegar will crack its own vessel.

Պղինձը չատ ու ըլնի, իր վրէն կը թափի:
An overflowing pot pours over itself.

Ելած սիրտը, վարար գետը, մէկ է:
An aggravated heart and an flooding river are the same.

Եսամոլ և շահասէր *Egocentric and profit-seeking*

Առաջ մերը, յետոյ մերոնցը:
First for me, then for my folks.

Մէկի աչքն ա դուրս եկեր, մէկէն ըսաւ՝ տո՛ւր, տանեմ կատուիս:
One has an eye taken out; the other says: “Let me take it to my cat.”

Մէկին միրուքը վառեցաւ, կեցի՛ր տաքնամ, ըսաւ միւսը:
Someone’s beard caught fire. “Let me warm myself,” said the other.

Մօրուքս բռնկեր է, կ’ըսէ՝ կեցի՛ր չիպուխս վառեմ:
My beard is on fire; he says: “Let me light my pipe.”

Առաջ մորթուս, յետոյ որդուս:
First for my skin, then for my kin [lit.: ... my son].

Փորս մօտ է, քանց քորս:
My own stomach is closer than my sister’s.

Կատուի մուկ բռնելը, իր փորի համար է:
The cat catches mice for its own stomach.

Քեզ շատ կ'ուզեմ, համա ինձ քեզանէ շատ կ'ուզեմ:
I like you very much, but I like myself much more.

Հարեւանիս կը սիրեմ, որ հաւարիս գայ հասնի:
I love my neighbor for rushing out when I call for help.

Հաց ու գինի ունիս, իմ սէրը դուն ես, հաց ու գինի չունիս, իմ դէմը դուն ես:
If you have bread and wine, you are my angel; if you don't, you are my dev.*

Հարեւանիս սիրում եմ, որ մատիս դեղ անի:
I love my neighbor for mending my finger.

Էն հարեւանին մեռնիմ, որ ձուիս աղ կ'ընէ:
I would lay down my life for that neighbor who salts my egg.

Գայլը թողածը կ'ափսոսայ, հովիւը՝ յափշտակուածը:
The wolf deplores what he left, the shepherd – the theft.

Տէրը տարածն էր լալիս, գէլը՝ մնացածը:
The owner cries for the missing; the wolf for the missed.

Մեռնեմ էն ճպուռտ աչքերաց, որ իմ հացին կարագ քսի:
I would give my life for those sickly eyes that spread butter on my bread.
[“Sickly eyes” stands for a person with a revolting appearance.]

Իմ գոռնէն չփչեմ, ինչ ա քու էշը հուշտ չըլնի[®] (չխրչի):
Should I stop blowing my zurna so your donkey won't be annoyed?*

Աչքդ մենակ քեզ է լոյս տալիս:
Your eyes give sight to you alone.

Ընենց ծիծաղա, որ ես էլ ծիծաղեմ:
Laugh in a way that I can laugh as well.

Փիլաւ ուտելը լաւ ա, համա մի օր մեր տանը, մի օր ձեր տանը:
It's good to eat pilaf, but let's have it one day at our place, one day at yours.*

Մի՛ լինիր ուրազի պէս, միշտ դէպի քեզ. այլ եղիր սղոցի պէս,
մէկ դէպի մեզ, մէկ դէպի քեզ:
*Don't be like an axe, always aimed toward you; be like a saw, once to-
ward us, once toward you.*

Երախտագէտ և ապերախտ **Grateful and ungrateful**

Ինչ աղբրից մարդ ջուր խմի, էն աղբրին քար չեն գցի:
You should not cast stones in the well from which you drink water.

Հաւն որ հաւ ա, որ ջուր խմայ, Աստուած կ'իշկայ:
Even the chicken looks up to God after drinking water.

Շունը կերած տեղը կը հաջէ:
A dog barks where it's fed.

Շունը տիրոջը կը ճանչնայ:
A dog recognizes his master.

Շունն էլ իր տիրոջը վրայ չի հաջի:
Not even a dog barks at his master.

Կաթնատու կովի պտուկին չեն թքի:
You shouldn't spit on the udder of a milk cow.

Թող ասեն գէշ ա, թող չասեն էշ ա:
Let them call me nasty, but not an ass.

Սառած օձն տաքցնես, առաջ քեզի կը խայթէ:
Warm a frozen serpent, and it will bite you first.

Օձի ձագը, առաջ պահող-մեծացնողին կը խածնէ:
The snake's young will bite its caretaker first.

Իրանց տանը կուտ են ուտում, խալիխի տանը ձու ածում:
They eat grain in their own home and lay eggs in someone else's.

Ղառղան պահէ, որ աչքդ փորէ:
Keep a raven to pierce your eye.

Գողգիդ նստեմ, միրուքդ փետեմ:
Let me sit on your lap and pull out your beard.

Հացը ծնկանը, աչքը կնկանը:
The host's bread on his lap, his eye on the host's wife.

Ում ասում եմ, իմը դուն ես, ասում է, իմ դեւը դուն ես:
Whoever I call my love calls me a dev.*

Որուն աչքս ըսի, աչքս հանեց:
Whoever I called "apple of my eye" pulled out my eye.

Աղբիւրը որ մոռնտառես, ջուրը ո՞րտեղից պտի խմես:
If you dirty the well, from where will you drink water?

Ջին նստաւ, Աստուած մոռցաւ, ձիուց իջաւ, ձին մոռցաւ:
He rode the horse, he forgot God; he got off the horse, he forgot the horse.

Երես առած, չփացած, աներես Spoiled, pampered, intrusive, impertinent

Երես տուինք, աստառ ուզեց:
We gave him the fabric and he asked for the lining.

Գովացին Ալիխան, ելաւ քաքեց պատուխան:
They praised Alikhan [male name]; he went and shat on the divan.
[lit.: ... "on the window."]

Մին մի՛ տա, որ երկու չուզի:
Don't give him one, he will ask for two.

Թաթին տեղ արաւ, կրունկին էլ կ'ուզէ:
He made room for his palm, now he wants room for his heel.

Ոտաց տեղ արեց, գլխուն էլ կ'ուզէ:
He made room for his feet, now he wants room for his head.

Փարէ մը տուինք խօսեցուցինք, երկուսը կու տանք, ձէնը չի կտրէ:
We gave him one penny to talk; with two pennies we cannot stop him.

Բարեւ տաս, Բարեկենդան կու գայ:
If you greet him, he will visit you at Paregentan.*

Շունը որ խաղող ուտել սորվի, բաղը կը քանդի:
If the dog gets used to eating grapes, he will destroy the vineyard.

Երեսը թքնես, անձրեւ կու գայ, կ'ըսէ:
Spit in his face and he will say it's raining.

Դռնէն վռնտես, երդիքէն ներս կ'ընկնի:
If you throw him out the door, he will come in through the sky-light.

Երկերեսանի, կեղծաւոր և չողոքորթ
Two-faced, deceitful, and hypocritical

Երեսանց հայելի, տակեւանց ածելի:
On the surface – a mirror, underneath – a razor.

Դիմացէն հայելի, ետեւէն ածելի:
From the front – a mirror, from the back – a razor.

Տանը հայելի, դուրսը ածելի:
At home – a mirror, outside – a razor.

Դուրսը քահանայ, ներսը սատանայ:
Outside – a priest, inside – a beast.

Չեմ ուզում, գրպանս դիր:
I don't want it, put it in my pocket.

Ներսէն խնամի, դրսէն թշնամի:
Inside – an in-law, outside – a foe.

Գիշերը գողութիւն կ'ընէ, ցերեկը «Տէր ողորմեա» կ'ըսէ:
At night he's a thief, in the day a man of belief.

Մէկ ձեռքով խաչ կը հանէ, մէկալով գողութիւն կ'ընէ:
With one hand he crosses himself, with the other he steals.

Վրէժ գառան մորթի ես առել, տակից գազան ես:
You put on a lamb skin, underneath you are a beast.

Գէլի հետ գառն ա ուտում, տիրոջ հետ վայվռուկ է անում:
With the wolf he devours the lamb; with the owner he laments it.

Շան կաղալուն մի՛ հաւատա:
Don't believe a dog's limping.

Շան կաղալը մինչ գիլու տեսնալն է:
The dog's limping will last until he sees the wolf.

Դրսից շատ տաք, ներսից շան քաք:
Outside – witty, inside – shitty.

Շատ անուշ է, տակը փուշ է:
Very sweet, but thorny underneath.

Շողոքորթ գառը օխտը մօր կը ծծի:
A two-faced lamb would suck seven mother sheep.

Սուտ խենդ է եղեր, վանքի հաւերը կ'ուտէ:
He pretends to be a fool and devours the monastery's chickens.

Քաղցր լեզուն օձը ծակիցը կը հանի:
A sweet tongue can talk the snake out of its den.

Լեզուն մեղր, սիրտը լեղի:
His tongue is honey, his heart is gall.

Լաւի յարգը չիմացող *Unable to appreciate the good*

Էն ի՛նչ գիտի, նուէն ի՛նչ է:
What does the donkey know of the almond?

Սոխակի երգը իշի համար զուռ է:
The nightingale's song is to the donkey a roar.

Շունն ի՛նչ գիտի, Շահն ի՛նչ է:
What does a dog know of the Shah?*

Խոզի գլուխը խալիչի վրայ չի կենայ:
The pig's head won't stay on the carpet for long.

Խոզի գլուխը սեղանն են դրել, գլորեր աղբն է ընկել:
They put the pig's head on the table, it rolled into the garbage.

Խոզի առաջ մարգարիտ չեն փռի:
You don't cast pearls before swine.

Մնափառ *Vain*

Ոտին տրեխ չունի, գլխին վարդ է չարում:
She has no shoes to wear, yet she puts roses in her hair.

Տունը չունի գդալ մը թան, սիւսլի-փիւսլի կ'ելլէ մէյտան:
At home she has no tan to drink, yet walks the streets in silk and mink.*

Տունը չկայ թան ու փռչի, գլուխը կապեր ա կարմիր փուշի
(բարակ գլխաշոր):
At home she has to crave and starve, but still she wears a purple scarf.

Շոր չունի հագնելու, ֆայտոնով կ'երթայ քաքնելու:
She has an empty wardrobe, but takes a coach to the commode.

Ծոյլ, անբան *Lazy, inactive*

Ալարողի (ծոյլի) ապրանքը լաց կ'ըլնի:
The idle man's goods will cry.

Ով ալարի, ո՛չ դալարի:
If you don't strive, you'll never thrive.

Անդատել ձեռք անօթի փորի վրայ է:
An idle hand rests on an empty stomach.

Ամռան պառկեմ հովեր, ձմռան հատին կովեր:
In summer I lay in the shade; in winter my cows lay dead.

Ծուլութիւն չի գտնի արքայութիւն:
Laziness will never find happiness.

Ես Աղա, դու Աղա, մեր ջաղացքը ո՞վ աղայ:
I am an Agha, you are an Agha; who will turn our mill?*

Ես ուստա, դու ուստա, բա մեր աղբը ո՞վ դուրս տայ:
I am a boss, and you are a boss, who will take out our dross?

Հաց դնեմ, հասի՛, բան դնեմ, փախի՛:
I set the table, you run for it; I give you work, you run from it.

Խմոր ուտելուց ուղտ ա, բեռ տանելուց՝ աւանակ:
To eat cookies, he is a camel; to carry loads, he is an ass.

Բանի անունը տալուց գլխի ցաւը բռնում ա:
When he hears of work, his headache starts.

Անբանը հաց ուտելիս առողջ է, բանելիս՝ հիւանդ:
When it comes to eating, a lazybones is healthy, when it comes to working, he is sick.

Ամէն բանին բանգէտ ա, տախտն աւելուն, անգէտ ա:
When talking, he is adept; when sweeping the floor, he is inept.

Հոգը տարուան, բանը օրուան:
The worry of one year, the work of one day. [On procrastination]

Թամբալի (ծոյլ) համար շաբաթը օխտը (եօթը) կիրակի:
For the lazy bum, there are seven Sundays in a week.

Ծառի տակին պառկելուն, բերանդ տանձ չի ընկնի:
If you lay under the tree, pears won't fall into your mouth.

Բան բանողին բան շատ, պարապ պառկողին, չուք շատ:
For the worker – lots of trade, for the loafer – lots of shade.

Հարամ հաց ուտողը երկար չի ապրի:
He who eats stolen bread will not live long.

Ուտելուց չորս ձեռնանի կը դառնայ, անելուց, կը չոնթանայ (հաշմանալ):

To eat he is prepared, to work he is impaired.

[Lit.: When eating, he has four hands; when working, he is disabled.]

Յամառ **Stubborn**

Կը մեռնեմ, մեղա Աստծու չեմ ասի:
I would rather die than repent.

Դու ինչ ուզում ես ասա, նա իր էչն ա քշում:
Say what you will, he will have his way.
[Lit.: ..., “he is driving his donkey ahead.”]

Դու ինչ ուզում ես ասա, նա իր զուռնէն ա փչում:
Whatever you say, he will blow his zurna.*

Իշու ինտոր (յամառութիւն) կամրջի վրայ կը բռնէ:
The donkey turns stubborn just on the bridge.

Ես կ'ըսեմ, ես կը լսեմ:
I am talking, I am listening.
[Used when the stubborn are not paying attention.]

Կծծի և ագահ **Stingy and greedy**

Լու քերթելով մարդ չեն դառնայ:
You can't get anywhere by skinning a flea.

Մարդու աչքը մի բուռ հողով կը կշտանայ:
Merely a handful of earth will fill up one's eyes.

Լուից եղ հանող ա:
He would squeeze oil from a flea.

Օձ ընկնի ձեռը կը խուզէ:
If he gets hold of a snake, he will shave it.

Հաւկիթ որ տայ, մէջը դեղնուց չի գտնուիր:
If he gives you an egg, it won't have a yolk.

Եզան տակը հորթ կը փնտռէ:
He looks for a calf under an ox.

Ձեն ուտեր, որ չքաքեն:
They don't eat, so they don't shit.

Քիթին քաքը ուտող է:
He would eat the snot from his nose.

Իր քաքը կ'ուտի, դատածը չի ուտի:
He would eat his droppings, but not his savings.

Շանից մազ պոկելը խէր ա:
Plucking a hair from a dog is still a gain.

Կոպեկի վրայ քառասուն հանգոյց կը գցի:
For a penny, he would turn forty somersaults.

Չուտողի մալը ուտողին հալալ ա:
What the miser won't eat suits those who eat it.

Ձեռին օձ ըլնի, մարդու վրայ չի գցի:
If he had a snake, he wouldn't throw it on anyone.
[i.e., He would not give away anything.]

Կծծիի մալը փեսաները կ'ուտեն, վիզը՝ ոջիլը:
The goods of the greedy will be eaten by his sons-in-law, his neck – by the lice.

Մարդու աչքը ծակ է:
Eyes are bottomless pits.

Գիւլու բնի բոլորը ոսկոր իսկի կ'աւելնա՞յ:
Will there ever be leftover bones around a wolf's den?

Տանձն ինծի, խնձորն ինծի, սերկեւիլն էլ սիրտս կ'ուզի:
The pear for me; the apple for me; I crave the quince as well.

Սոխ ու սխտորը հիսապ ընողը փաչա չ'ուտեր:
He who scrimps on onion and garlic will not eat pacha.*

Ո'չ կ'ուտեմ, ո'չ կ'ուտեցնեմ, դարակը կը դնեմ, կը հոտեցնեմ:
I won't eat it, nor will I let you taste it; I'll put it in the drawer and waste it.

Մարդ կայ որ մեղքն ալ ուրիշի չի տար:
Some people wouldn't give away even their sins.

Ագահն ասաց, ես խնդացի. Աստուածն ասաց, չհաւատացի:
The miser said: "I was a happy guy." God said: "That is a lie."

Ջրիակեր եւ տգրուկ Parasitic and freeloading

Պապան բերէ, մաման եփէ, տատան ուտէ:
Daddy will bring, Mommy will cook, baby will eat.

Սատկած էչ ման կու գայ, որ նալերը քաշէ:
He is looking for a dead donkey so he can pull off its hooves.

Հօրը բերածը կերել է, մօրը մանածը հագեր է:
He spent what his father won, he wore out what his mother spun.

Ճարպիկ ու հնարագետ Skillful and resourceful

Սատանից օխտն (եօթը) օր առաջ է ծնուել:
He was born seven days before the devil.

Ղազարը գիտէ իրեն պազարը:
Lazar [male name] knows his bazaar.

Դատարկ գցում է, որ լիքը բռնի:
He throws it empty to catch it full.

Ինչ քար վերցնես, տակէն դուրս կու գայ:
Whatever stone you lift, he will be underneath.

Գիտուն աղուէսը երկու ոտով թակարդ կ'ընկնի:
The skillful fox gets trapped with both feet.

Ճարպիկ մուկը երկու ոտով կ'ընկնի թալաք:
The clever mouse gets trapped with both feet.

Անսկզբունք ու յարմարուող *Lacking principles and conforming to others*

Ջուրը կը տեսնէ, ձուկ կ'ըլլայ. ծակը կը տեսնէ, մուկ կ'ըլլայ:
Seeing water, he is a fish; seeing a hole, he is a mouse.

Զմեռը համամչի, ամառը բաղմանչի:
In winter – bath attendant; in summer – gardener.

Քամին որ կողմը փչէ, հոն կը դառնայ:
Wherever the wind blows, there he turns.

Գիլու տարածը հօր հոգուն մատաղ է ասում:
What the wolf steals, he passes off as his father's matagh.*

Մէջընկան *Meddlesome*

Ով հարս, դու հարսնաքուր:
Where there is a bride, you are the bridesmaid.

Ով փեսայ, դու փեսաղբէր:
Where there is a groom, you are the best man.

Որտեղ երկու շուն լծեն, դու էնտեղ սէլուոր կ'ըլնես:
Where they yoke two dogs, you will be the driver.

Անպոչ գդալի պէս ամէն աման կը մտնի:
He falls in every vessel like a ladle without a handle.

Ուրտեղ պուտուկ, ինք բերանի խուկ:
Where there is a pot, he will be the lid.

Ուրտեղ մանղալ, ինք մէջը մաշա:
Where there is a fire pit, he will be the poker.

Հնդկաստան ընկոյզ կտրեն, մէջէն կ'ելլէ:
If they crack a walnut in India, he will come out of it.

Իրան աչքի գերանը թողած, ուրիշի հոփն է ման գալիս:
Ignoring the beam in his own eye, he looks for the splinter in someone else's eye.

Դեղ ունիս քո գլխին արա:
If you have a cure, cure your head.

Քեզ համար ես քնում, ուրիշի համար երազ տեսնում:
You sleep for yourself, you dream for others.

Կուտ ունիս, քու հաւի առաջն ածիր:
If you have grain, feed your hen.

Խրատ ունիս, գլխիդ տուր, սապոն ունիս՝ շորիդ:
If you have advice, use it for your head; if you have soap, use it for your robe.

Շատախօս **Talkative**

Շատախօսի գլուխը ծակ ա:
A chatterbox has a hole in his head.

Երկու ականճ մի բերան, իմացի՛ր խօսքիդ սիրան (կարգը):
Two ears and one mouth, don't be a blabbermouth.
[Lit.: Two ears and one mouth, know when it is your turn to speak.]

Շատ հաջան շունը, ոչխարին գէլ կը բերէ:
A barking dog invites wolves to the sheep.

Խուլն է յաղթեր շատախօսին:
Only a deaf man can beat a babbler.

— **Ձաջանակին (շատախօս) ո՞վ սուս կացրուց.** — **մունջը:**
Who silenced the chatterbox? The deaf.

Դժուարահաճ եւ բծախնդիր
Fussy and meticulous

Շատ լաւին ման եկողը, շատ փխին ռաստ կը գայ:
He who searches for the best will end up with the worst.

Շատ մի ընտրի, ընտրտոցը կ'ընկնես:
Don't be choosy, you will lose your choices.

Որկրամուլ, շատակեր
Gluttonous, voracious

Փոր ու հորը մէկ է:
A belly and a well are the same.

Ծակ բողազը (կոկորդ) ինչ որ լցնես, ներս կ'երթայ:
The bottomless throat swallows everything you push down it.

Դարմանը (յարդ) քոնը չի, դարմանանոցը հո քոնն ա:
The hay is not yours – the haybarn surely is.
[Referring to a gluttonous guest devouring large amounts of food;
“hay” is a metaphor for food and “haybarn” for the stomach.]

Մէկ չուտողէն վախցիր, մէկ ուտողէն:
Beware of those who either eat too much or don't eat at all.

Շատ ուտելը քիչ ուտելուց էլ կը գցի:
If you eat too much, you will be deprived of eating little.
[i.e., If you squander, you will be deprived of necessities.]

Փորը լի, աչքն անօթի:
The stomach is full; the eye is hungry.

Չար, դաժան, չկամ
Nasty, cruel, unkind

Օձին վրայ թքնէ, օձը կը սատկի:
If he spits on the snake, it will die.

Վախեցիր էն մարդուց, որ չի վախենայ Աստծուց:
Beware of those who are not afraid of God.

Արեւ ըլլայ, մարդու վրայ չի ծագեր:
If he were the sun, he wouldn't shine on anyone.

Ագռաւին ասեցին թէ, ծիրտդ դեղ ա, էն էլ գնաց ծովի մէջ ծրտեց:
They told the raven: "Your droppings can cure"; he dropped them in the sea.

Գայլը արիւնով ա հարբում:
The wolf gets drunk on blood.

Մատից փուշ հանող պտուղ չի:
He is not the kind to pull a thorn from anyone's finger.

Ո՛չ ինծի կով մը, ո՛չ դրացիիս երկու կով:
I don't want a cow, nor should my neighbor get two.

Կատուին ասին աղբդ դեղ է, խորունկ թաղեց:
When told its excrement is a remedy, the cat buried it deep.

Որ ասեն մէզը դեղ է, ոչ ոքի վրայ չի չռի:
If they told him his urine could cure, he wouldn't urinate on anyone.

Սանդն էլ ա իրա ձեռին, վարսանդն էլ:
Both the sand and the varsang* are in his hands.*
[i.e., He is very powerful and nasty.]

Քարն էլ ա իրա ձեռին, պոպոքն էլ:
Both the stone and the walnut are in his hands.

Թուղթն էլ ա իրա ձեռին, կալամն էլ:
Both the paper and the pen are in his hands.

Չհաւան, պարծենկոտ եւ գոռոզ
Overbearing, boastful and arrogant

Չանեմ, չհաւանեմ:

I do nothing, nor do I like what others do.

Կարօն հաւնաւ Մարոյին, Մարօն չհաւնաւ Կարոյին:

Karo liked Maro, Maro didn't like Karo.

[Said about people who claim to dislike someone when, in fact, they are the rejected ones. Karo is a male name, Maro, a female name.]

Ես ագռաւին հաւանեցի, ագռաւն ինձ չհաւանեց:

I liked the crow, the crow didn't like me.

Կուզիկին աղջիկ չեն տալիս, նա ուզում է զոքանչն էլ սիրուն լինի:
They refuse the hunchback (the hand of) their daughter; he demands that the (future) mother-in-law be beautiful too.

Բերան չէ, խորան է:

It's not a mouth, it's an altar.

Մեծ սարերն ինքն է ստեղծել, պզտիկները վախից են եղել:
He created the big mountains here; the small ones there grew out of fear.

Աքլորը երգիլի գլխին կայնելուց, ասում ա.

«Էս տները ո՞նց են տակիս դիմանում»:

The rooster on the roof wonders:

“How can these houses support my weight?”

Հաւ չեղած, թառ է թռնում:

Before becoming a hen, she jumps on the perch.

Ուղտն ասաց. «Շարբաբ (մետաքսագործ) եմ»: Ասացին. «Ոտք ու ձեռքիդ սազում է»:

The camel said: “I am a silkmaker.” They said: “Your hands and feet are surely suited for it.”

Մուկ չեղած, դդում կը ծակէ:

He is not yet a mouse, yet he nibbles at the pumpkin.

Գարի հացը ըսաւ. «Բացուիմ»:

Յորեն հացը ըսաւ. «Շատ մի՛ բացուիր, կը կոտորիս»:

The barley bread said: "I will rise open."

The wheat bread said: "Don't open too much, you'll pop."

Հորթը որ կովի առաջն ընկնի, գէլը կը տանի:

When the calf walks ahead of the cow, the wolf snatches it.

Պոռնուր մարդիկ մեծ երազ կը տեսնան:

Little people dream big dreams.

Դատարկ սէլը շատ ձէն կը հանէ:

An empty carriage makes a lot of noise.

Բանն արա, յետոյ պարծեցիր:

Get things done, then start bragging.

Շատ վեր թռնողը շուտ ցած կ'իյնայ:

He who flies high will fall before long.

Շատ պարծեցողը պարկը կը մտնի:

If you are eager to brag, you will end up in a bag.

Առուն թռիր, նոր քեզ գովամ:

First jump over the brook, then seek my praise.

Գորտին հարցուցին քի. «Ինչու՞ տայմա (չարունակ) կը պոռաս»:

«Զայնիս գմայած եմ» ըսաւ:

They asked the frog, "Why do you croak so much?" "I'm fond of my voice," it replied.

Առաջ ածէ, յետոյ կականես ըրէ (կչկչա):

First lay an egg, then cackle.

Դուն քեզ մի՛ գովեր, թող ուրիշը գովէ:

Don't praise yourself, let others praise you.

Մի ասեղ պիտի առնի, պողպատի փութն ա հարցնում:

To buy a needle, he is asking for the price of a pout of steel.*

Ինքը պզտիկ, լեզուն մեծ:
His size is small, his tongue is big.

Մեծախօսի ձեռքէն բան չի գայ:
A big mouth has clumsy hands.

Փխատէն (հետիոտն) ձիաւորի վրէն ծիծաղում ա:
The footman is laughing at the rider.

Խորոզ չեղած, կը կանչէ:
He crows before becoming a rooster.

Մեծ խօսելով փլաւ չի եփուի, եղ ու բրինձ է հարկաւոր:
You cannot cook pilaf by talking big; you need butter and rice.*

Ես կու գամ վանուց, ինք կու տայ քարոզ:
I am coming from the convent, he is preaching the sermon.

Ո՛չ մարդանման, ո՛չ մարդահաւան:
He doesn't look like anyone, nor does he like anyone.

Իրեն գովողը կ'իյնայ աղբին կողովը:
A boastful man ends up in the garbage can.

Հպարտը, մի օր կը մտնի պարկը:
The proud, one day, will go into the shroud.

Հպարտ մարդու տակը փուտ է, ինչ որ ասի, սուտ է:
A braggart is full of hot air; what he says is never there.

Պարապ տակաւոր մեծ ձայն կը հանէ:
An empty barrel makes a lot of noise.

Արժանաւոր եւ անարժան **Worthy and unworthy**

Մէկ կայ, հազար արժէ, հազար կայ, մէկ չ'արժէ:
Some ones are worth a thousand; some thousands are not worth even one.

Մարդ կայ, մարդ ա, մարդ կայ, զարդ ա:
Some people are real people, others are ornaments.

Մարդ մարդու քահանայ, մարդ մարդու սատանայ:
Man can be someone's priest; man can be someone's beast.

*Լաւութիւնին լաւութիւն, ամէն մարդու բանն ա, վատութիւնին
լաւութիւն, մարդ մարդու բանն ա:*
*To repay good with good, anyone can; to repay evil with good, only a
good man can.*

Վախկոտ Coward

Վախկոտ չունը որս չի անի:
A timid dog cannot hunt.

Վախկոտի աչքին կատուն գիշերը դեւ է երեւում:
To the coward the cat seems to be a dev at night.*

Վախկոտը մէկ փոսուռայ տեսնէ, հառայ կու տայ թէ կրակ կայ:
If the timid sees a glow-worm, he shouts, "Fire!"

Գէլից վախցողը ոչխար չի անի:
He who is afraid of wolves won't keep sheep.

Ինքն իր շուքէն կը վախնայ:
He is afraid of his own shadow.

Անազնիւ, անվստահելի Dishonest, untrustworthy

Դավէն փալանով կուլ կը տայ:
He could swallow a camel along with its saddle.

Շանը շապիկ կը հագցնէ, կատուին՝ վարտիք:
He could put a shirt on a dog and shorts on a cat.

Դատարկ գցում է, որ լիքը բռնի:
He throws it empty to catch it full.

Անկից հեռու եղողը, Աստծուն կը մօտենայ:
Whoever stays away from him, approaches God.

Բանուորի մանգաղ գողացող է:
He would steal a workman's sickle.

Եօթը գեղ մէկ իշու կը բառնայ:
He would load seven villages on one donkey.

Տղան մամուս փորէն կը հանէ:
He would pull a child from its mother's belly.

Առանց խոսկի-մոմի ուխտատեղ կ'երթայ:
He would go on a pilgrimage with neither incense nor candle.

Մեռելը հողէն կը հանէ:
He would dig the dead out of the grave.

Քեզ աղբիւր կը տանի, ծարաւ յետ կը բերի:
He would take you to the spring and take you back thirsty.



Chapter 5

ՄԱՐԴՈՒ ԲՆՈՒԹԻՒՆԸ HUMAN NATURE

Themes

<i>Մարդ միշտ պատրուակ մը կը գտնէ</i>	107
<i>One always finds excuses</i>	
<i>Մարդ կ'օգտուի յարմար առիթէն</i>	108
<i>People take advantage of opportunities</i>	
<i>Մարդիկ տարբեր են</i>	109
<i>People are different</i>	
<i>Մարդ ինքնուրոյն է</i>	110
<i>Man is autonomous</i>	
<i>Մարդ առաջ իր մասին կը մտածէ</i>	110
<i>People put themselves first</i>	
<i>Քու ցաւը դուն գիտես</i>	112
<i>Your pain is yours</i>	
<i>Նեղութեան մէջ մարդ կռուան կը փնտռէ</i>	113
<i>In trouble you look for a hold</i>	
<i>Ոմանք օրհասի պահուն անխոհեմ կը վարուին</i>	113
<i>When their time is up, some behave irrationally</i>	
<i>Ուրիշի ունեցածը միշտ աւելի լաւ կը թուի</i>	114
<i>What others have seems to be better</i>	
<i>Մարդ պատասխանատու է իր արարքներուն համար</i>	114
<i>People are responsible for their actions</i>	

Մարդ ուրիշներուն աւելի օգտակար է քան իրեն114
People are more useful to others than to themselves

Մարդ իր սխալը չի տեսներ115
People are blind to their faults

Մարդ միշտ պատրուակ մը կը գտնէ
One always finds excuses

Արտը խախուտ, մահանան (չինծու պատճառ) կարկուտ:
The crop is of no use, the hail is an excuse.

Տունը խախուտ, մահանան կարկուտ:
The house decays, it's the hail, he says.

Բակը ծուռ է, կովը կաթ չի տալ:
The barnyard is crooked, the cow has no milk.

Խլլոտին ցուրտն է մահանա:
For a runny nose, the cold weather is an excuse.

Խլլոտին հարցուցին. «Քիթդ ինչո՞ւ կը վազէ»:
«Ձմեռ է» - ըսաւ:
«Քեզ ամառն ալ գիտենք, ձմեռն ալ»:
They asked the runny nosed man, "Why is your nose running?"
"It's winter," he replied.
"We know you in the summer, as well as in the winter."

Կաքաւին ըսին. «Ինչո՞ւ ոտներդ կարմիր են»:
«Ցուրտ է», - ըսաւ:
«Հա», ըսին, «մենք քեզի ամառն ալ տեսանք»:
They asked the partridge, "Why are your feet so red?"
"Because of the cold," it replied.
"Well," they said, "we saw you in the summer, too."

Ճպուռտ աչքին մուխը պատճառ:
For the sick eyes, smoke is an excuse.

Երեխէն մահանա, մէրը կշտանալ:
The child is an excuse for the mother to have her fill.

Խախուտ մարդուն գարեհացը մահանա:
For the sickly person the barley bread is an excuse.

Քուռին մութը մահանա:
For the blind, darkness is to blame.

Կատուի դուռնչը մսին չհասաւ, ասաց. «Էսօր ուրբաթ է:»
The cat could not get to the meat, it said: "Today is Friday."
[Friday is a day of fasting.]

Տղան մահանա, մարը քնանայ. տղան մահանա, մարը կշտանայ:
The child – an excuse for the mother to sleep, the child – an excuse for the mother to eat her fill.

Աղուէսի դուռնչը խաղողին չհասաւ, ասաց. «Խակ է»:
The fox couldn't reach the grapes, it said: "They are green."

Մարդը հողեղէն է, երկնքէն չէ:
Humans are of earth, not of heaven.

Սխալիւր մարդկային է:
To err is human.

Մարդ կ'օգտուի յարմար առիթէն
People take advantage of opportunities

Գողը ի՞նչ է ուզում. մութ գիշեր:
What does a thief wish for? A dark night.

Գէլն ամպ օրը կ'ուրախանայ:
The wolf will rejoice on a cloudy day.

Գէլն ամպ օր կ'ուզի, գողը՝ մութ գիշեր:
The wolf longs for a cloudy day; the thief – for a dark night.

Մինչեւ ջուրը չպղտորուի, ձուկ չի բռնուի:
You cannot catch a fish before the water gets muddy.

Կատուն տունը չի, մկները պար կը խաղան:
The cat is away, the mice will dance and play.

Շները կռուեցին, անցորդի բանը յաջողուեց:
The dogs fought, the pedestrian got away.

Մարդիկ տարբեր են *People are different*

Ամեն մարդ էլ մեկ չի լինի:
All people are not alike.

Ամեն ծաղիկ իր հոտն ունի:
Every flower has its own scent.

Ամեն մարդ մեկ-մեկ խելքի կը ծառայէ:
Every person serves a particular brain.

Մարդ կայ տէրտէրն է սիրուժ, մարդ կայ՝ տէրտէրակինը:
Some like the priest, some like his wife.

Ամեն գլխէն մէյ-մէկ ձայն կ'ելլէ:
From every person's head a different voice is heard.

Ամեն մարդ իր գիտցածը կը խօսի:
Everybody says what he knows.

Մարդ կայ, որ իր աչքն ա սուր, մարդ կայ, մանգաղն ա կտուր:
Some have a sharp eye, others a sharp sickle.

Որը նալին կը գարնէ, որը՝ մեխին:
Some hit on the horseshoe, some on the nail.

Ամեն ծաղիկ իր սերմն ունի. ամեն տարիք՝ իր պէտքն:
Every flower has its seeds; every age – its needs.

Ամեն մարդ աշխարհը իր սրտին պէս գիտէ:
Everybody judges others according to his own heart.

Մարդ կայ՝ մարդ ա, մարդ էլ կայ՝ մարդակ ա:
Some humans are humans, some others are columns.

Ամեն մարդ իրեն կաթին ընկածը կենէ:
Everybody acts according to the milk he was destined to drink.
[i.e. Genetics].

Մարդն ինքնուրույն է
Man is autonomous

Ամէն մարդ իր գլխի տէրն է:
Everybody is the master of his own head.

Ամէն խորոզի ձայնը իր բունի մէջ բարձր կ'ելլէ:
Every rooster's voice is loudest in its own pen.

Ամէն զուշ իր կտուցով կ'ուտէ:
Every bird eats with its own beak.

Ամէն մարդ իր տունը, հաւերն ալ իրենց բունը:
Everybody in his den, and the hens in their pen.

Ամէն մարդ իրեն գլխարկը թող բռնէ, որ չընկնի:
Let everybody stop his own hat from falling.

Ամէն մարդու սրտին մէջ ասլան մը կայ պառկած:
In every heart, a lion sleeps.

Ամէն ոչխար իր դմակը կը կրէ:
Every sheep carries its own dmak.*

Մարդ առաջ իր մասին կը մտածէ
People put themselves first

Ամէն մարդ իր օգուտին ա վազում:
Everyone runs after his own profit.

Ամէն մարդ իր հէը կը քշէ:
Everyone drives his own donkey forward.

Ամէն մարդ իր Կարապետը կու լայ:
Everyone cries for his own Garabed [common male name].

Ամէն մարդ իր հաւան (եղանակ) կը չալէ:
Everyone plays his own tune.

Ամէն մարդ իր մեռելը կու լայ:
Everyone laments his own dead.

Ո՞վ կ'ըսէ թէ թանա թթու է:
Who would call his own tan sour?*

Ամէն մարդու շապիկն իրան ջանին մօտիկ է:
Everyone's shirt is close to his body.

Ամէն մարդ իր մուշտին (բռունցք) քար կը կարծէ:
Everyone thinks his fist is made of stone.

Մարդ իր քաբին փի՛Ֆ չ'ըսեր:
No one says “fie” to his own shit.

Մարդուս իրա արածը իր աչքին չի երեւայ:
One never notices his own wrong-doings.

Ամէն մարդ իր կորկոտը կ'աղայ:
Everyone grinds his own korkot.*

Ամէն մարդ իր ըրածին կը հաւնի:
Everyone likes what he is doing.

Ամէն մարդ իմ ալուրս ճերմակ է, կ'ասէ:
Everyone says, “My flour is white.”

Ամէն մարդ իր խալկինին (կաթսայ) տակը փայտ կը դնէ:
Everyone adds wood under his own kettle.

Ամէն մարդ իրա գործը կը յառաջացնի:
Everyone moves his own affairs forward.

Ամէն մարդ իր կտաւը ներկելու ետեւ ա:
Everyone is after dyeing his own cloth.

Հէրքէս (ամէն մարդ) իրեն քերացած տեղը կը քերէ:
Everyone scratches where he itches.

Ամէն մարդ ջանում է իր ծառին ջուր տալ:
Everyone takes pains to water his own tree.

Առաջ մորթիս, յետոյ որդիս:
First to my skin, then to my son.

Ամէն մարդ իր տան առջեւը կ'աւլէ:
Everyone sweeps in front of his own house.

Ամէն մարդ ջուրը իր ջաղացքը կը կապէ:
Everyone channels the water to his own mill.

Մի օձ, որ ինձ չի կծի, թող հազար տարի ապրի:
Let the serpent that doesn't bite me live a thousand years.

Իմ չգնացած դրախտը, թող էշերն երթան:
Let the paradise that's not for me be for the donkeys.

Իմ մեռնելուց յետ, թող կտրի աղբիւր ու գետ:
After I die, may all rivers and wells run dry.

Քու ցաւը դուն գիտես **Your pain is yours**

Ամէն մարդի տարտը իրան ցաւ կը տայ:
Everybody's worry causes pain to him alone.

Ամէն մարդի տարտը իրան համար տաւայ (ուղտ) է:
Everybody thinks his own troubles are as big as a camel.

Հազար կնիկ հաւաքուեն, ցաւը ծննդկանին ա:
Even with a thousand women around, it's the woman in labour who suffers the pain.

Կրակն ինկած տեղը կ'այրէ:
The fire will burn where it strikes.

Ցաւը քաշողը գիտէ:
It's the sufferer who feels the pain.

Սաղն ի՛նչ իմանայ, կաղն ի՛նչ ա:
How would he who walks straight know how it feels to limp?

Եարէն (վէրք) տիրոջը ցաւ կը տայ:
A wound gives pain to the wounded.

Եզին քաշածը մինակ իր կաշին գիտէ:
Only its hide knows what an ox has to endure.

Ուրիշի մեռելը ուրիշին քնած է թուում:
When the dead are not your own, they seem to be sleeping.

Նեղութեան մէջ մարդ կռուան կը փնտռէ
In trouble you look for a hold

Ծովն ընկնողը փրփուրին էլ ձեռ կը գցի:
He who falls into the sea will reach out even for the foam.

Ծովն ընկնողը ձեռքը օձին էլ կը գցի:
He who falls into the sea will reach out even for a snake.

Ջուրն ընկնողը չոփիցն ա բռնում:
He who falls into the water will reach out for a straw.

Մինչեւ ամպը չգողայ, Աստուած-Աստուած չեն կանչի:
No one calls God for help until he hears thunder.

Ոմանք օրհասի պահուն անխոհեմ կը վարուին
When their time is up, some behave irrationally

Շանը սատկելիքը որ գայ, կ'երթայ ճամու (մզկիթի) բակը կ'աղտոտէ:
If the dog is about to die, it goes and craps in the mosque yard.

Օձի օրհասը որ գայ, կը գնայ ճամբի մէջտեղը կը պառկի:
When its days are through, the snake lies in the middle of the road.

Շան կատաղելը իր գլխին կորուստ ա:
When a dog goes mad, it's for his own head.

Աստուած որ մէկի տունը քանդի, առաջ խելքը կ'առնի:
Before destroying your home, God takes away your mind.

Ուրիշի ունեցածը միշտ աւելի լաւ կը թուի
What others have seems to be better

Հեռուից լսուող տափի ձէնը դուր կը գայ:
The sound of clapping sounds better from afar.

Հարեւանի հաւը հարեւանի աչքին գէր կ'երեւայ:
The neighbor's hen looks fatter.

Հարեւանին հարսը հարեւանին սիրուն կ'երեւայ:
The neighbor's daughter-in-law seems prettier.

Ուրիշի կնիկը սիրուն կը լինի:
Someone else's wife is always prettier.

Ուրիշին տոպրակին վրայ զռալ չ'ըլլար:
Don't bray at somebody else's bag.
[Refers to a donkey-like appetite for another's belongings.]

Մարդ պատասխանատու է իր արարքներուն համար
People are responsible for their actions

Այծն իր վիզէն կը կախեն, ոչխարը իր ճիւղէն (ոտք):
They hang the goat by his neck, the sheep by his leg.

Ամէն մարդ իր փոսը կը լցնէ:
Everyone fills his own grave.

Ամէն մարդի իր պարանովը կախ կը տան:
They hang a man with his own rope.

Ամէն մարդի պարտքը իրենից կ'ուզեն:
Everybody will be asked to pay his dues.

Մարդ ուրիշներուն աւելի օգտակար է քան իրեն
People are more useful to others than to themselves

Դարբինը դանակ չի ունենայ:
A blacksmith will have no knife.

Կօշկակարին կօշիկ չի լինի:
A shoemaker will have no shoes.

Ջուլհակին պատանք չի լինի:
There will be no shroud for a weaver.

Դանակն իր կոթը չի տաչեր:
A knife cannot carve its handle.

Մոմն իր տակը չի լուսաւորի:
The candle does not cast light beneath itself.

Արեւ ես, ամա ուրիշին լուս կու տաս:
You are the Sun, but you give light to others.


Մարդ իր սխալը չի տեսներ
People are blind to their faults

Տեւէն իր կուզը չի տեսի:
A camel doesn't see its hump.

Քուռը չլին չի հաւնիր:
The blind man doesn't like the cross-eyed.

Էչն ինքն է, խոտն ուրիշի առաջը կը դնէ:
Being himself a donkey, he puts the hay in front of others.

Քոսին տնազ անողը (ծաղրողը) լաւ միրուք կ'ունենայ:
You must have a good beard yourself before you can laugh at the beardless eunuch.



Chapter 6

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԻՃԱԿՆԵՐ STATES OF BEING

Themes

Առողջ և հիւանդ	119
<i>Healthy and sick</i>	
Առողջ մնալու խորհուրդներ	120
<i>Advice for good health</i>	
Փորձանքի մէջ	121
<i>In peril</i>	
Որոշ պայմաններ նախընտրելի են	121
<i>Some conditions are preferable</i>	
Կոյր	122
<i>Blind</i>	
Ուրախ և տխուր	122
<i>Happy and unhappy</i>	
Ցաւ, հոգ	123
<i>Pain, worry</i>	
Մահ	124
<i>Death</i>	
Գինով, ծարաւ	126
<i>Drunk, thirsty</i>	

Անօթի, կուշտ	128
<i>Hungry, full</i>	
Վախեցած	131
<i>Afraid</i>	
Աժօթահար	131
<i>Embarrassed</i>	
Գեղեցիկ, տղեղ	132
<i>Beautiful, homely</i>	
Երկարահասակ եւ կարճահասակ	134
<i>Tall and short</i>	
Խաբուսիկ արտաքին	135
<i>Deceptive appearance</i>	
Հագուստ	137
<i>Clothes</i>	

Առողջ և հիւանդ *Healthy and sick*

Սաղութիւն (առողջութիւն), սուլթանութիւն:
Health is wealth.

Հիւանդի աչքը դռանը կ'ըլնի:
A sick person's eyes are fixed on the door.

Մարդի ինչտեղը ցաւեց, հոգին էնտեղն ա:
Wherever it hurts, there is your soul.

Ուտեմ տենդիմ, չուտեմ տենդիմ. լաւ է ուտեմ տենդիմ:
Whether I eat or not, I'll have the fever; better I eat and have the fever.

Ո՛չ առողջ եմ քայելու, ո՛չ հիւանդ եմ պառկելու:
Neither healthy enough to walk nor ill enough to lie down.

Հիւանդն էն ա, որ չամիչը օխտը տեղից ա կծում:
A sick person bites from a raisin seven times.

Ցաւն ականջ ունի:
Sickness has ears. [Do not speak of sickness or it will come.]

Հիւանդը չէ հիւանդ, հիւանդի տէրն է հիւանդ:
It's not the sick person who is sick, it's his caretaker.

Ցաւը կը դայ վազէ-վազ, դուրս կը դնայ նազէ-նազ:
Sickness comes rapidly and leaves graciously.

Օրը մթնանայ, ցաւը շատանայ:
As the day grows darker, the pain grows stronger.

Տնքալը որ չըլնի, հիւանդը հիւանդ չէ:
If it weren't for the sighing, a sick person wouldn't be sick.

Հիւանդութիւնը դանակ-դանակ կու դայ ու դմակ-դմակ կ'երթայ:
Sickness comes like a knife and leaves like a dmak.*
[i.e., Sickness has an acute start but a sluggish ending.]

Ցաւին աղէկը չ'ըլլար:
There is no such thing as a good sickness.

Լաւ է հիւանդ լինես, քան թէ հիւանդ պահես:
It's better to be sick than to care for the sick.

Կաղ կաց, սաղ կաց:
Keep limping, but stay alive. [i.e., It's better to be crippled than dead.]

Գլուխդ որ ցաւեց, սաղ ջանդ (մարմինդ) կը ցաւի:
When your head aches, your whole body aches.

Առողջ մնալու խորհուրդներ *Advice for good health*

Ցրտից վախեցիր, որ ցաւ չտեսնես:
Keep away from the cold, so you won't suffer pain.

Կեռասն ասել է, զիս շատ ուտողը իմ պոչից բարակ կ'ըլնի:
The cherry said, "He who eats a lot of me will be slim like my stem."

Տղան ջուրը կը մեծնայ, ձուկը՝ ծովը:
A child grows in the water, a fish in the sea.

Գլուխդ պաղ պահէ, ոտքերդ տաք:
Keep your head cool, your feet warm.

Ամէն բանին բարակը կը կտրուի, մարդուն՝ հաստը:
Everything breaks when thin, only humans when thick.

Ճանճի նստած տեղը աղույոտ (թունաւոր) կ'ըլնի:
Where flies sit, there will be germs.

Գլուխդ պաղ, փորդ թույլ, ոտքդ տաք պահեցիր, հէքիմ (բժիշկ) եղար, գնացիր:
If you keep your head cool, your stool loose, and your feet warm, you are your best doctor.

Ծիրան մին կեր, ինձոր երկու, սալոր՝ քանի փորդ տանի:
Eat one apricot, two apples; but as many prunes as you can.

Ափ մը ջուր, ափ մը լոյս:
A splash of water is a flash of light.
[i.e., Cold water is beneficial for the eyes.]

Ցուրտը տարած տեղը կրակին չեն անի:
Keep what is frostbitten away from the fire.

Ցուրտը տարած տեղը ձիւնով ետ կու գայ:
They cure frostbite with snow.

Շան կծածը շան մազով կը բուժեն:
They cure the dog's bite with the dog's hair.

Փորձանքի մէջ *In peril*

Փորձանքը խապար չի անի:
Disaster gives no warning.

Փորձանքը գալու ըլլայ նէ, տունը նստած տեղն ալ կու գայ:
If disaster is on its way, it will come even while you sit at home.

Փորձանքի կէս ճամբիցը դառնալը խելօքութիւն ա:
If you are half way to ruin, it is wise to return.

Որոշ պայմաններ նախընտրելի են *Some conditions are preferable*

Լաւ ա գեղի կատուն, մինչ (քան) դոսի խաթուն:
It's better to be the village cat, than a foreign aristocrat.

Լաւ է սարին տակն ամաչել, քանց սարին գլուխը:
It's better to be ashamed at the foot of the mountain than on its top.

Լաւ է ճանճի գլուխ լինել, քանց առիւծի պոչ:
It's better to be the head of a fly than the tail of a lion.

Լաւ ա չիլդի (չիլ) լինես, քան թէ քուռ:
It's better to be cross-eyed than blind.

Լաւ ա ոտս նեղանայ քանց սիրտս:
It's better my feet get into trouble, than my heart.

Կոյր **Blind**

Քոռն ի՞նչ կ'ուզի, երկու աչք:
What do the blind wish for? Two eyes.

Քոռին (կոյր) համար գիշերն ալ մէկ է, ցերեկն ալ:
For the blind, night and day, it's all the same.

Կոյր մարդուն աչքին աշխարհքը մուժ կ'երեւայ:
For the blind, the world seems dark.

Քոռին ի՞նչ պէտք է թէ ճրագը թանկ է:
What does it matter to a blind man if the candle is expensive?

Ուրախ և տխուր **Happy and unhappy**

Լացը լաց կը բերէ, ծիծաղը՝ ծիծաղ:
Tears bring tears, laughter brings laughter.

Լացն ու ծիծաղը աղբէր են:
Tears and laughter are twins.

Տարտ անողին տարտ չի պակսի:
Those who worry will never be short of worries.

Տարտ անողին տարտ չի պակսի, քէֆ անողին քէֆ չի պակսի:
Those who worry will never be short on worries, those who rejoice will never be short on joy.

Մինչեւ տարտ չտեսնիս, ուրախութիւն չես տեսնի:
You won't see joy before you have felt pain.

Մեծ տարտին մեծ խելք է պէտք:
A great grief needs a great mind.

**Շատ որ ուրախանաս, գնա՝ գերեզմանները. շատ որ տրտմիս, էլի՝
գնա գերեզմանները:**

*If you are overly happy, go to the cemetery; if you are overly sad, still
go to the cemetery.*

Մինչեւ մարդի հոգին չցաւի, աչքերը չեն լացի:

The eyes won't cry before the heart [lit.: soul] gets hurt.

Ջուրը դուրսը կը մաքրէ, արտասուքը՝ ներսը:

Water cleans you from the outside, tears – from within.

Քառսուն տարի ա՛խ չ'ըլլար:

There cannot be forty years of sighing. [i.e., No sorrow is endless.]

Ցաւ, հոգ Pain, worry

Ամէն մարդ ցաւ մ'ունի:

Everybody has a sorrow.

Ցաւը իսանին (մարդ) է, չէ թէ սար ու քարին:

Pain is for humans, not for mountains and rocks.

Ցաւը իսանը (մարդ) կը քաշի:

Only humans can bear pain.

Ցաւը մարդի ցեցն ա, ջանը կ'ուտի:

Worry is like a moth; it eats up one's heart.

Շատ տարտի տէր, շատ կը խօսայ:

He who has many worries talks too much.

Շատատարտ, շատազրոյց:

Much worry, much talking.

Տարտ կայ, կու գայ կ'անցնի, տարտ կայ, կ'այրէ կ'անցնի:

Some troubles come and go; others burn you, then they go.

Մի տարտը մարդ չի սպանի:

One worry alone won't kill you.

Ամէն մարդ իրա տարտը կ'ասի:
Everybody talks about his own worries.

Ցաւը լեռներին են տուել, չեն դիմացել, առել մարդուն են տուել:
They gave pain to the mountains; they couldn't bear it, so they gave pain to humans.

Ցաւը քաշողը գիտէ:
He who has suffered pain knows pain.

Ցաւը ուրացեր է հաւատը:
Pain can renounce faith.

Մատը կտրողը կակիծը գիտէ:
He who has cut his finger knows the pain.

Ցաւը քաշողին կու տայ Աստուած:
God gives pain to those who can take it.

Մահ **Death**

Քնածն ու մեռածը, տիփ մէկ է:
Asleep or dead, it's all the same.

Սատանէն մեռւից փախ ա:
(Even) the devil dreads the dead.

Մահէն վախցողին ապրածն ալ մեռածի հաւասար է:
If you fear death, being alive is equal to being dead.

Ահը շատ ա քանց թէ մահը:
Fear is more than death.

Անճար ցաւի դեղը գերեզմանն ա, անճար հիւանդի բժիշկը՝ մահը:
The grave is the medicine for the incurable pain; death is the doctor for the incurable man.

Շատ ապրել կայ, ուշ մեռնել կայ:
There is such a thing as living long; there is such a thing as dying late.

Քիչիկ ցաւիկ, անուշ մահիկ:
The shorter the pain, the sweeter the death.

Հիւանդացաւ, չմեռաւ. կրկնեց, մեռաւ:
He got sick – he survived; he relapsed – he died.

Մահը ահ կու տայ, ահն ալ մահ կու տայ:
Death causes fear, fear causes death.

Հոգը ցաւ կը բերէ, ցաւը՝ մահ:
Worry brings sickness, sickness brings death.

Մահը մարդի ականջի ետեւին ա:
Death is behind your ear.
[i.e., Death is close.]

Մահը տեսածին պէս, ջերմին գոհ կ'ըլլայ:
At the sight of death, man tolerates fever.

Մահը մի օր, լացը մի օր:
Death in one day, tears in one day.
[i.e., Grief and sorrow do not last long.]

Մեռնողի ետեւէն մէկը չէ մեռեր:
Nobody has died of grief [i.e. after someone close died].

Այսօրուայ մահը այսօր կու լան:
Today's death is mourned today.

Մահը մեծ ու պզտիկ չի հարցնում:
Death doesn't ask if you're old or young.

Մեռնողի վրայ տէրը կու լայ, տէրտէրը կ'ուրախանայ:
Death makes the mourner cry and the priest laugh.

Մարդ իր մեռնելու օրի վրայ չպիտի խօսի:
One should not talk about the day of his death.

Միտքը երկար, կեանքը կարճ:
The mind is long, life is short.

Տղին մեռնելէն մի՛ վախենա, խանկրելէն վախեցի:
Don't dread a child's death; dread its paleness.
[i.e., It is better for a child to die, than to be sickly.]

Ինքնասպանի համար դատաստան չկայ:
There is no trial for someone who commits suicide.

Ինչ ծնում է, մեռնում էլ է:
What is born shall also die.

Գետինէն ելել է, գետինը կ'երթայ:
He came from earth; he will go to earth.

Մահէն անդին գեղ չկայ:
There is no village after death.
[i.e., There is no afterlife.]

Էն կեանքեմէն ոչ ոք խապար չի բերել:
Nobody has ever brought news from the next life.

Գինով, ծարաւ *Drunk, thirsty*

Գինի խմողը մէկ կը հարբի, խմացընողը՝ հազար:
He who drinks wine gets drunk once; he who makes others drink, a thousand times.

Ես խմեցի, դուն հարբար:
I drank, you got drunk.

Նխիա (ճրի) գինի խմողը երկու անգամ կը հարբի:
He who drinks free wine gets twice as drunk.

Ջուրն անուշ է, քանց նուան գինին:
Water is better than pomegranate wine.

Աշնան գինին, գարնան ջուրը:
The wine in fall and the water in spring (are the best).

Ջրի օգուտն էլ շատ ա, վնասն էլ:
Water can do both good and harm.

Գինի, խմէ՛ ու քնի՛:
Drink the wine and sleep fine.

Գինու մի թասը դեղ, մնացածին՝ տեղ:
One glass of wine is a relief; more than that, “good grief!”.

Խմիչքին մէկը լաւ է, երկուսն բաւ է, երեքը՝ ցաւ է:
One drink can cure you, two can cheer you, three can kill you.

Գինի, կաթ է ծերոց:
Wine is the milk for the elderly.

Մի՛ խմեր քանի մը հատիկ, որ չըլլաս խախք ու խայտիկ:
Don't drink one after another so you don't become a bother.

Գինին անուշ-անուշ կը խմուի, լեղի-լեղի դուրս կ'ելլէ:
When wine goes in, it's sweet; when it comes out, it's bitter.

Գինին մարդու չի մեռցնի, համա շան օրը կը գցի:
Wine will not kill you, but it will make a fool of you.

Խմելուց, հայ-հայ, հաշուումը, վայ-վայ:
When you drink, you enjoy; when you pay, oh boy!

Գինովը իր եա հարը կը լացնէ, եա մարը:
A drunk makes either his father or his mother cry.

Գինովին ձեռք մի զարնէք, ան ինքնիրեն վար կ'ընկնի:
Don't push the drunk; he will fall by himself.

Այծին գինի են տուել, գնացել գայլի հետ կռիւ է արել:
They gave the goat wine, it went to fight the wolf.

Գինիին հարցուցին. «Աւրածդ շատ է, թէ շինածդ:» Ասաց. «Շինածս չգիտեմ, աւրածս համրանք չունի:»
They asked the wine, “Did you do more of building or destroying?” It said, “I know nothing of building; of destroying I know a lot.”

Հարբելու վերջը փոշմանութիւն է:
Drinking ends in regret.

Փունջը մունջին պիւլպիւլ (լեզուանի) կ'ընէ:
The punch puts words in the mute's mouth.

Գինին ներս կը մտնէ, սըռը (գաղտնիքը) դուրս կ'ելլէ:
The wine goes in, the secret comes out.

Հարբածին խելօք խօսքն ալ օդը կը ցնդի:
Even the wise words of a drunkard fade with the wind.

Խենդը գինովէն վախցեր է:
The fool fears the drunkard.

Գինովին եա լացը կու գայ, եա շեռը:
The drunkard is either about to cry or to pee.

Անօթի, կուշտ *Hungry, full*

Խօսքը քամին տանում է, կերածը մնում է:
What is spoken the wind will carry away; what is eaten will stay.

Անօթութիւն – անամօթութիւն:
Starvation – humiliation.

Վիրաւոր մարդուն քուն կու գայ, անօթի եղողին չի գայ:
A wounded man can fall asleep, a hungry man cannot.

Օձի կծածը կը քնի, սովածը չի քնի:
If bitten by a snake, you will fall asleep; if hungry, you won't.

Քաղցած ոչ ոք չի մեռել:
Hunger hasn't killed anybody yet.

Տարտլին շատ կը խօսէ, քաղցածը շատ կ'ուտէ:
The worried talk a lot, the hungry eat a lot.

Կուշտը սովածի հալից չի հասկանայ:
The well-fed don't know how the hungry feel.

Կուշտը անօթուն մանր կը բրդէ:
The well-fed cut tiny pieces for the hungry.

Աւելի պատառ փոր չէ ծակում:
One more bite won't pierce the stomach.

(Անօթի) հաւը երազը կորեկ է տեսեր:
The (hungry) hen dreams of millet.

Անճրեւ օրը հաւերուն ջուր տուող շատ կայ:
On a rainy day, many will give water to the chickens.

Անօթի մարդը քարէն կակուղը կ'ուտէ:
The hungry will eat anything softer than stone.

Անօթի մարդուն հացը գաթայ կերեւայ:
For the hungry, bread seems like gata.*

Շոր տուր շնորհքի գամ, հաց տուր ուժի գամ:
Dress me up, I will look smart; feed me full, I will get strong.

Ճաշ տեսաւ, քամանչան մոռցաւ:
He saw food; he forgot his kamancha.*

Մարդիս իշտահը (ախորժակ) ատամի տակին ա:
Appetite is under the teeth.

Մարդ իր ակռաներով կը փորէ իր գերեզմանը:
You dig your grave with your teeth.

Բանը ծնունդը չի, բանը սնունդն ա:
It's the feeding, not the breeding.

Պատէն ընկնողը չի մեռնի, հացէն ընկնողը կը մեռնի:
Falling from a wall won't kill you, falling short of bread will.

Հոտած ըլնի, հատած չըլնի:
Better rotten than all gone. [About food.]

Հացիկ-ջրիկ, կեանք երջանիկ:
Bread and water – happy life.

Ապուր կեր, դուռը ել, փիլաւ կեր, լեռը ել:
Eat soup, go as far as the house door; eat pilaf, go up the hill.*

Պաղ ապուր, շան կերակուր:
Cold soup – dog's food.

Հացը սուլթան, ջուրը վեզիր, մնացածը գըզիր-մըզիր:
Bread is a Sultan, water a Vezir*, the rest doesn't matter.*

Ուր կայ հաց ու թան, սուտ է ամէն բան:
Where there is bread and tan, nothing else matters.*

Հաց ու թան ունես, ամէն բան ունես:
If you have bread and tan, you have everything.*

Հաց մարդահան, հաց մարդակորուս:
Bread can repair you, bread can impair you.

Տաք հացին հոտը դրախտ է հասեր:
The smell of fresh bread has risen to paradise.

Ապուրը ապրանք, հացը պարծանք:
Soup is alright, but bread is the pride.

Հացը տան պակաս-պռատը կը դգի (հարթել):
Bread fixes all the shortcomings of a house.

Գիշերուայ կերածը կորած է:
What was eaten at night is wasted.

Շաքարն անուշ է, ամա հացին տեղը չի բռներ:
Sugar is sweet, but it can't replace bread.

Իրիկուայ արածը գտած ա, կերածը՝ կորած:
What is done in the evening is won, what is eaten is wasted.

Իչու փորը մանիշակով չի լցուի:
You cannot fill the donkey's belly with violets.

Գարնան գառն է գովական, աշնան՝ հաւը:
In spring, (you should eat) the lamb; in fall, the chicken.

Կուշտ ուտելը Զատիկի իրիկունն է:
It's on Easter's eve that you eat your fill.
[On Easter's eve, fasting ends and feasting begins.]

Շունն էլ ուտելիս լուռ է:
Even the dog is silent while eating.

Վախեցած Afraid

Աչքը տեսածէն կը վախենայ:
Eyes fear what they have seen.

Սեւ օձի կծածը սեւ պարանից կը վախենայ:
He who was bitten by a black snake will fear a black rope.

Կաթից բերանը հրուել է, մածունը փչելով է ուտում:
If you've burned your mouth on milk, you will blow on yogurt.

Գայլի ահիցն գեղ չչինե՞նք:
Out of fear of the wolf, we shouldn't build the village?

Կատուն մկան միշտ գէշ երազ կը տեսցնէ:
The cat causes nightmares for the mouse.

Ահը էշը վազուկ կ'ընէ:
Fear makes the ass run.

Աղուէսը փուշին վրայ մէյմը կը նստի:
The fox sits but once on the thorns.

Վախեցած աչքը չոփ կ'ընկնի:
A fearful eye will get splinters.

Մկան ասին՝ – Ինչի՞ հը չափ պզտիկ ես: – Կատուի ահից:
They asked the mouse: “Why are you so small?” “Out of fear of the cat.”

Ամօթահար Embarrassed

Ռազիլ (ամօթահար) լինելուց, մեռնելը լավ է:
Death is better than disgrace.

Թքելը մի ամօթ է, լիզելը՝ երկու:
Spitting is one shame, licking it back – twice the shame.

Երեսն երեսեմէն կ'ամաչի:
It's the face that shames another face.

Սարին գլուխն ամչնալու, սարին տակին կ'ամչնամ:
I'd rather be embarrassed at the foot of the mountain than on its top.

Բեր ըս եկալ (հղիացել ես), դե՛ ծնի:
You got pregnant, go ahead, give birth!

Գեղեցիկ, տղեղ Beautiful, homely

Տանը կատուն էլ լավ է, որ սիրուն ըլի:
In a home even the cat should be pretty.

Խորոտը որ փողոցը քալէ, գետինը կը թնդայ:
When the beauty walks on the street, the ground thunders under her feet.

Արեւուն կ'ըսէ, դու մի՛ դուրս գայ, ես եմ՝ դուրս գալու:
She (the beautiful woman) says to the sun, "Don't rise, I will."
[In Armenian folk belief, the sun is a symbol of beauty.]

Լուսնկան պատուեր, մէջէն ելեր է:
It is as if the moon unfolded and she emerged.

Սիրունի երեսին փիլաւ չեն ուտում:
You cannot eat pilaf on a beautiful face.*
[i.e., Beauty cannot replace material goods.]

Ալ էլ հագնի կը սագի, չալ էլ հագնի կը սագի:
Be it purple or be it wool, both suit her well.

Մի հատ շարժեմ, աշխարհք արժեմ:
Once I move forward, I'm worth the whole world.

Սպիտակի տեսքը, սեւի համը:
The looks of the white and the flavour of the black (woman).

Աղջկայ մի սպիտակութիւնը օխտը (եօթը) այըպ (ամօթ) կը պարտկէ:
The whiteness of a woman's skin covers up seven sins.
[Stereotype: white skin is beautiful.]

Սեւ ու դեղին, ով որ տեսնի, պատուի լեղին:
Black and yellow (her face); he who sees her will be frightened to death.
[“Black and yellow” is a pejorative epithet for swarthinness; «պատուի լեղին» “the bile bursts” as a result of extreme fright.]

Հաւը թող չիւրքին ըլլայ, տէ (միայն) հաւկիթ ածէ:
Let the hen be ugly as long as she lays eggs.

Երեսին աչողը կը կշտանայ:
If you look at her, you'll have your fill.

Երեսին ձուածեղ եփեն, չի ուտուի:
If you would cook an omelette on her face, you couldn't eat it.

Մազն ու միսը կու գան ու կ'երթան:
Hair and flesh come and go.

Գիշու (տգեղ) հացը կեր, խորոտկի (գեղեցիկ) ծոցը պառկի:
Eat the food of the homely woman, but sleep with the beautiful.

Երեսը սրտին հայելին է:
The face is the mirror of the heart.

Այնպէս գեղեցիկ է, որ մութ պատերուն լոյս կու տայ:
She is so pretty that she sheds light on dark walls.

Արեւը որ ելնի, աստղերը կը խաւարեն:
When the sun rises, the stars fade.
[i.e., Next to the beautiful, the plain pale.]

Ազուռը սիրուն է, գէշը տիրուն է:
The beautiful you caress, the ugly you possess.

Երկարահասակ եւ կարճահասակ *Tall and short*

Պոյը լման, խելքը մկան:
The height of a house, the mind of a mouse.

Պոյը երկար, խելքը կարճ:
His stature is tall, his brain is small.

Մարդու խելքը գլխու մէջ կ'ըլնի, ոչ թէ պոյի:
The brain is in one's head, not in one's height.

Բարդին էլ ա չատ բոյով, ի՛նչ անես, որ բար (պտուղ) չունի:
What use is a tall poplar if it bears no fruit?

Պոյին եմ մտիկ անում, խելքս ա գնում, խելքին եմ մտիկ անում,
զահլէս ա գնում:
*When I look at his height, I lose my mind; when I look at his mind, I
lose my delight.*

Երկանը կը խընդայ պոյին, կարճը՝ կտորին:
The tall man enjoys his size; the short man enjoys the fabric he buys.
[The short man saves money on the fabric for his clothing.]

Թիզ ու կէս, գետնի բզեզ:
(S/he is) the size of a handspan, the size of a floor bug.

Կարճ մարդու մտքից օրը տասն անգամ թագաւորութիւն կ'անցնի:
The short man ponders a kingdom ten times a day.

Որքան գետնի վրայ է, այնքան ալ գետնի տակ է:
As much a s/he is on the earth, as much s/he is under the earth.

Խաբուսիկ արտաքին *Deceptive appearance*

Ամէն պսպղացող ոսկի չի:
All that glitters is not gold.

Մազերի սպիտակութեանը որ նայես, սագն էլ ա սպիտակ:
If you judged by white hair, you would revere the goose as well.

Ամէն սեւ հագնող տէրտէր չէ:
Not all who wear black are priests.

Սեւը ներս, ճերմակը դուրս:
The black inside, the white outside.
[i.e., Bad feelings are to be hidden.]

Ամէն հատիկ մարգարիտ չէ:
Every grain is not a pearl.

Գդակը մեծ, տակը դատարկ:
A big hat, empty underneath.

Խոշոր աչքեր լոյս չկայ, գեր-գեր թեւեր ուժ չկայ:
Big eyes and no sight, thick arms and no might.

Անունը կայ, ամանումը չկայ:
The name on display, but nothing on the tray.

Թուփն աղէկ, պտուղ չկայ:
The bush looks good, but bears no fruit.

Աւեր քաղաքին, չէն անուն:
A ruined city, though the name is pretty.

Սեւ սիրտ, սպիտակ ատամ:
Black heart, white teeth.

Ծուխը շատ, խորովածը քիչ:
The smoke high up, but little kebob.*

Հաջան չունը մարդ չի կծի:
A barking dog doesn't bite.

Սեւ հաւը ճերմակ հաւկիթ կ'ածէ:
A black hen lays a white egg.

Ամպի գոռալու կէօրայ, անձրեւ չի գայ:
The rain that falls won't match the thunder that rolls.

Ամէն ամպ անձրեւ չի բերի:
Not every cloud brings rain.

Հեզ ձիու կիցը սաստիկ կ'ըլլայ:
The kick of a quiet horse is the strongest.

Մեծ քար վերցնողը զարկելու նպատակ չունի:
He who picks up a big stone won't strike.

Մունջ կատուն շատ մուկ կը բռնէ, քանց խօսունը:
A silent cat catches more mice than a loud one.

Շունը կաղալով չի սատկի:
A dog won't die from limping.

Դրսից պսպղայ շորս, սովից ղռղռայ փորս:
Outside my dress sparkles, inside my stomach rumbles.

Ամէն կլոր խնձոր չի:
Not everything round is an apple.

Ներսը ինձ ա վառում, դուրսը՝ ուրիշին:
Inside you depress me, outside you impress others.

Օձի սեւն էլ անիծուի, սպիտակն էլ:
Damned is the snake, whether white or black.

Կաթողիկէն մենծ, զօրութիւնը փոքր:
The cathedral is tall, its power is small.

Տուն պոփլոզիկ (փառաւոր), մէջը տկոզիկ (մերկ):
A dazzling exterior, an empty interior.

Շորերս հին ա, խօսքս անգին ա:
My clothes are old, my words are gold [lit.: priceless].

Ձուկը ջրին մէջ մեծ կ'երեւնայ:
A fish looks bigger in the water.

Գդակս թօզոտ տեսար, ջաղացպա՞ն կարծեցիր:
You saw my dusty hat, and you thought I was a miller?

Էշն էն էշն ա, փալանն ա փոխած:
The donkey is the same, only the saddle has changed.

Հեռուանց էլի (օտար) աչքն ա հանում, մօտըկանց՝ տիրոջը:
From afar you strike the stranger, from close-by your owner.

Կոչումը կայ, միջումը չկայ:
The title is there, inside it's bare.

Հագուստ **Clothes**

Մարդին մարդ շինողը շորն է:
Clothes make the man.

Շորն ասաց. «Դու ինձ պահի պողջամիջին, ես քեզ պահեմ մարդամիջին:»
The clothes said, “You keep us in the bundle, we keep you in the crowd.”
[i.e., Use you clothes sparingly, so that they stay new for good occasions.]

Ծալած շորը ինքն իրան կը մաշի:
Folded clothes wear out by themselves.
[i.e., Do not keep your clothes for too long unused.]

Էշը փալանով, մարդը հալաւով (հագուստ):
Donkeys (are judged) by their saddles, humans by their clothes.

Փողը մարդուն խելք կը բերի, շորը մարդուն քէլք կը բերի:
Money gives you brains, clothes make you walk with airs.

Լէնին ճար կայ, նեղին՝ ճար չկայ:

For the wide (clothing) there is a cure, for the narrow, there is none.

Մարդուս կարողութիւնը հագուստովը կ'իմացուի:

Clothes show the wealth of the person.

Որքան աղքատնաս, չախա (ճոխ) հագիր:


However penniless, dress well.

Շոր (հագուստ) տուր՝ շնորհք տամ, հաց տուր՝ ունդ (զոյն) տամ:

Give me some clothes, I will look wealthy, give me some food, I will be healthy.

Մարդուս կարողութիւնը հագուստովը կ'իմացուի:

Clothes show the wealth of the person.



Chapter 7

ՀԱՄԱՏՔ ԵՒ ՄՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

BELIEFS AND SUPERSTITIONS

Themes

<i>Աստուծոյ մասին</i>	141
<i>About God</i>	
<i>Աստուած արդարը կը վարձատրէ</i>	142
<i>God rewards the honest</i>	
<i>Հոգի, հաւատ, հանդերձեալ կեանք</i>	143
<i>The soul, the faith, and the hereafter</i>	
<i>Ըրածդ պիտի հատուցուի</i>	144
<i>Your actions will be rewarded</i>	
<i>Բախտ եւ ճակատագիր</i>	147
<i>Luck and destiny</i>	
<i>Մարդ իր ճակատագրի տէրն է</i>	148
<i>Everyone is the architect of his own destiny</i>	
<i>Տէրտէրի մասին</i>	149
<i>About the priest</i>	
<i>Մեղք, յանցանք, արդարութիւն</i>	150
<i>Sin, guilt, justice</i>	
<i>Մեղքերը երկար գաղտնի չեն մնար</i>	151
<i>You cannot hide your sins for long</i>	

Երազ	151
<i>Dreams</i>	
Նախապաշարում	152
<i>Superstition</i>	
Անէծք եւ օրհնէնք	154
<i>Cursing and Blessing</i>	
Յաջողութիւն եւ ձախողութիւն	154
<i>Good and bad fortune</i>	
Ես բախտ չունիմ	155
<i>“I am unlucky”</i>	

Աստուծոյ մասին About God

Աստծու պահած գառը գէլը չի ուտի:
A wolf won't eat a lamb guarded by God.

Աստուած ամէն շնորհք մի մարդու չի տար:
God does not bestow one person with all talents.

Քուռ հաւքի բունը Աստուած կը շինէ:
The blind bird's nest is built by God.

Աստուած որ տայ, չի հարցնի ում տղէն ես:
When God gives, he does not ask whose child you are.

Աստուած փլաւ ուտողին փլաւ կու տայ, ժաժիկ ուտողին ժաժիկ:
God gives pilaf to those who eat pilaf, and zhazhik* to those who eat zhazhik.*

Աստուած մատ չունի, որ աչքը խոթէ:
God has no finger to pluck out your eye.
[i.e., God has his own godly ways of punishing.]

Քրիստոսին աչքով չտեսան, սրտով ճանչցան:
They didn't see Christ with their eyes, they recognized him in their hearts.

Մարդ մարդի երեսին կը նայի, Աստուած՝ սրտին:
Man looks to man's face, God to man's heart.

Մարդ մարդի խօսքին մտիկ կը տայ, Աստուած՝ սրտին:
Man listens to man's words, God to man's heart.

Աստուած տարտ տուեր, դարման ալ տուեր է:
Along with grief, God gives us relief.

Տուն շինողին, աղջիկ կարգողին, Աստուած հետը կ'ըլլայ:
God stands by those who build a house, or marry off a daughter.

Սատանի շինածը Աստուած կը քանդէ:
What the devil built, God will destroy.

Խորհուրդ մարդկանց, կամքն Աստուծոյ:
Man proposes, God disposes.

Յաջողէ Տէրը, պսակէ տէրտէրը:
If the Lord allows, the priest will bless the vows.

Ճամբորդի գնայն իր ձեռն է, դառնալն՝ Աստծու:
Leaving is up to the traveller, returning is up to God.

Թէ Աստուած չօգնէ, վիզ ծռելը զուր բան է:
Without God's backing, it's pointless to bend your back.

Աստուած էլ լաւին է տանում:
Even God takes the best.

Աստուած ողորմած է ըսողը, անօթի կը մնայ:
He who leaves it in the hands of God will starve.

Լաւ է մէկ անգամ Աստծուն խնդրել, քան քառասուն անգամ քառասուն սրբի:
It's better to beg God once, than forty saints forty times.

Թագաւորը հեռու է, Աստուած բարձր:
The King is far, the Lord is high.

Ա՛խ Աստուած, մէկին կու տաս սէլով փէտ, որին չես տայ ցախ, Աստուած:
O Lord, to some you give a cart of wood, to others not even brush-wood.

Աստուած արդարը կը վարձատրէ
God rewards the honest

Աստուած հալալին կու տայ:
God rewards the just.

Հարամ ուտողի մինն երկու չի լինի:
What is dishonestly earned will not augment.

Խոռոկն ու մոմը իր սրբավայրը կը գտնի:

The incense and candle will find their shrine.

Հալալը (արդար), որ մազ դառնայ չի կտրուի. հարամը (անարդար), որ գերան դառնայ, կը կտրուի:

What was earned honestly won't break, even if it gets as thin as a hair;

What was earned dishonestly will break, even if it gets as thick as a beam.

Հալալ մալը գէլը չի տանի:

The wolf won't take what is honestly earned.

Հարամ վաստակը բոռան (մրրիկ) կը տանի:

Dishonest earnings will be carried away by the storm.

Հարամը կու գայ, հալալն էլ կը տանի:

Dishonest earnings will carry away the honest earnings as well.

Դառը քրտինքի բերած կոպեկը ուղտի պոչ է, չի երկարի:

A penny earned with bitter sweat is like a camel's tail: it never grows.

Հոգի, հաւատ, հանդերձեալ կեանք *The soul, the faith, and the hereafter*

Հոգին անուշ է, քանց մարմինը:

The soul is sweeter than the body.

Լաւ է մարմնաւոր աղքատ, քան հոգեւոր:

Better to be poor in goods than in spirit.

Դատաստան կայ գալու, պատասխան կայ տալու:

On Judgment Day, you will be made to pay.

Արդարն ու մեղաւորը դատաստանին յայտնի կ'ըլլնի:

Just or unjust, it will be known on Judgment day.

Առաջ կեր, յետոյ գոհացիր:

First eat, then give thanks.

Հաւատքն իրմէ պէտք ա, վրան քսածը հաւատք չէ:

Faith must come from within; what is spread on is not faith.

*Խնկով մոմով արքայութիւն գնալ չի լինի:
You cannot get to paradise just by burning incense and candles.*

*Աշխարհքը լուսամուտ աւ. ամէն եկող մտիկ կը տայ ու կ'երթայ:
The world is a window: every newcomer looks out and then departs.*

*Աշխարհքը ոչ ոքի չի մնացել:
Nobody could keep this world for himself.*

*Աշխարհքս Սողոմոն իմաստունին էլ չի մնացել:
Even Solomon the Wise could not keep this world for himself.*

*Աշխարհի մալը աշխարհ կը մնայ:
The wealth of this world will stay in this world.*

*Դժոխքն էլ, դրախտն էլ, էս աշխարհումն է:
Both heaven and hell are in this world.*

*էն կեանքեմէն ոչ ոք խապար չի բերել:
Nobody has ever brought news from the next world.*

***Ըրածդ պիտի հատուցուի
Your actions will be rewarded***

*Ինչ որ ցանես, էն էլ կը հնձես:
What you sow is what you reap.*

*Ով կիրակնամուտ չպահի, մէջ դժոխքի կրակին մաշի:
He who does not keep Sunday's eve, in the fires of hell is destined to grieve.*

*Ինչ որ ասես, էն կը լսես:
What you say is what you hear.*

*Կարասի մէջ ինչ ձէն տաս, էն կը լսես:
Whatever you shout into the barrel, you will hear back.*

*Ուրիշին հոր փորողը, ինքը կ'ընկնի մէջը:
He who digs a pit for someone else will fall in it himself.*

Խածան շան ակռաները կը քակեն:
They pull out the teeth of a biting dog.

Տուն քանդողին տուն չի լինի:
He who destroys someone's home will never have one.

Տուն աւերողին, տուն չի մնայ:
He who destroys someone's home loses his own.

Տուն քանդողի տունը Աստուած կը քանդէ:
God destroys the home of those who destroy the home of others.

Խանչալը երերողը խանչալով կը գնայ:
He who swings the dagger, will die by the dagger.

Քամու դէմ թքողը, իրա երեսին կը թքի:
He who spits towards the wind, spits in his own face.

Ով ինչ անի, իրան կ'անի:
Whatever you do, you do to yourself.

Հարեւանիդ ուզի մի կով, որ Աստուած տայ երկու կով:
Wish one cow for your neighbor, so God gives you two.

Դուռը տփողի դուռը կը տփեն:
They pound at the door of those who pound at the door of others.

Անողաց, գտնողաց:
You do it, you get it.

Ասեղ խեթողը, մախաթ կը ստանայ:
He who pierces with a needle, will be pierced with a packing-needle.

Չար ուզողին, Աստուած չար կու տայ:
God gives evil to those who wish evil to others.

Շուռթեան գնացողը շնաթակ կ'ուտի:
He who turns to doggerly will be beaten like a dog.

Փչածդ գդալդ տի գայ:
What you blow on will come back to your own spoon.

Պատուէ՛, որ պատուուիս:
Honor to be honored.

Արիւն թափողը արիւնով ալ կ'երթայ:
He who causes bloodshed will perish in blood.

Արիւն խմողը արիւնլուայ կը դառնայ:
He who drinks blood, will be washed in blood.

Աջով տուր, որ ձախով առնես:
Give with your right to receive with your left.

Ուրիշին մասխարա գցողը, իրեն գլխին կը կատարի:
He who mocks others brings mockery upon himself.

Սիրէ ինձ, սիրեմ քեզ:
Love me, and I will love you.

Անողին չի մնայ:
He who commits (evil) will not go unpunished.

Աչքդ հանողի հոգին հանէ:
Pull out the soul of those who pull out your eye.

Ողորմողին ուրիշը կ'ողորմի:
He who takes pity on others will be shown pity in return.

Ամէն մարդու արածը դէմը կու գայ:
What you do to others will come back to you.

Հարամ հաց ուտողը երկար չի ապրի:
He who eats unearned bread will not live long.

Մարդասպանի թուրն անտէր կը մնայ:
A killer's sabre will lose its master.

Արիւնն արնով չեն լուանայ, ջրով կը լուանան:
You do not wash blood with blood, but with water.

Քուռն ինչպէս կ'աչէ Աստծուն, Աստուած էլ էնպէս կ'աչէ քուռին:
The way the blind look at God, God looks at the blind.

Բախտ ու ճակատագիր *Luck and destiny*

Երեսին մի՛ նայիր, բախտին նայիր:
Don't look at her face, look at her fate.

Երկու երնէկ մի տեղ չի լինի:
Two blessings cannot be in one place.

Ինքը քուն, բախտն արթուն:
He is asleep, his luck is awake.

Բախտը իրան-իրան կու գայ:
Luck comes by itself.

Աստղով եղար՝ լեռ քարի վրայ երթաս, կը կանաչի:
If blessed with a star, even rocks will thrive when you step on them.

Ո՛չ ֆալաքին վստահի, ո՛չ քու մալին յուսացի:
Rely neither on your fate, nor on your wealth.

էն թալէհն ունինք, որ վազող ջրին երթանք՝ կը կտրի:
With our luck, even if we go to running water it will dry up.

Բախտը գէշին (տգեղ), տարտը խորոտին (գեղեցիկ):
The ugly have good fortune; the beautiful, misfortune.

Անբախտ մարդը ծովերն էլ երթայ, կը ցամաքին:
Even the ocean will dry up when the unlucky goes in.

Կարկուտը ծեծած տեղը կը ծեծէ:
The hail hits more where it hit before.

Աշխարհքս չարիս է, պտոյտ է գալիս:
The world is a wheel, it is turning.

Որին աստղն շիրին (պայծառ) է, որինը՝ քոռ (կոյր):
The star of some is bright, of others blind [i.e. bleak].

Ում բախտը ծռուեց, նրա ձին ախոռումը էլ կը դառնայ:
If your fate turns ill, your horse turns into a donkey in the stall.

Բախտ կայ, փող կը մաղէ, բախտ կայ, ալիւր կը շաղէ:
Fate has it that some sift florins and others stir flour.*

Մարդուն թող բախտ եղնի, թող մէկ աչքը քու եղնի:
Let my good luck be nigh, let me be blind in one eye.

Քաջալ մարդը լաւ բախտ կ'ունենայ:
A bald man has good luck.

Ֆալաքը (բախտ) եղած ժամանակը պիտի բռնես:
Good fortune should be seized at the right time.

Ճակատի գրածը չի ջնջուի:
You cannot erase what is written on your forehead.

Ինչ որ գրած է, գրած է:
Whatever is written, is written.

Մօրէն ծնուեցաւ, գրուեցաւ ճակատին:
When he was born of his mother, it was written on his forehead.

Ինչ տեղ ումուտ (յոյս) չունես, էնտեղ ա խոտ բուսնում:
Where you don't expect it, there grass will grow.

Մարդ իր ճակատագրի տէրն է
Everyone is the architect of his own destiny

Գնա ծովն ընկիր, ճակտիս գիրն անանկ է ըսէ:
Go jump into the sea, and then say, "It was my destiny."

Մարդուն քաջածը իր խելքէն է:
It's your own brain that causes you pain.

Արծիւը իր փետուրներէն չինուած նետով կը վիրաւորուի:
The eagle is killed by the arrow made with its own feathers.

Ինքն իրան վէր (գետին) ընկնողը լաց չի լինի:
He who falls by himself, should not cry.

Տէրտէրի մասին **About the priest**

Կարգը օրհնած, ինքն անիծած:
His order is blessed, though he is damned.

Տէրտէրն առնելուն ղոչաղ ա, տալուն՝ նաչաղ:
The priest is good at taking, bad at giving.

Սար ու ձոր, տէրտէրի փոր:
The priest's belly, (is like) hill and valley.

Ժամտուն քանի ջոջ լինի, տէրտէրն իր գիտցածը կը կարդայ:
However many notables in the church, the priest will read what he knows.

Դու իմա գիտես, ես քունը, տէրտէրը՝ մեր երկուսինը:
You know all about me, I know all about you, the priest knows all about both of us.

Տէր ելաւ տիրունն է, տէր չելաւ՝ տէրտէրունն է:
If the owner shows up, it's his; if he doesn't, it's the priest's.

Տէրտէրի փորը մեծ կ'ըլլայ, ճեպը՝ օխտը:
The priest has a big belly and seven pockets.

Տէրտէրը զմէկ գիտի, իրիցկինը՝ գերկուք:
The priest knows one thing, his wife knows two.

Երբ իրիցկինը մեռնի, տէրտէրն էն պահ կ'իմանայ, որ մահ կայ:
Only when his wife dies, will the priest know that death exists.

Սատանին կը հաւատան, տէրտէրին չեն հաւատայ:
They believe the devil, but not the priest.

Առաւօտը որ տէրտէր տեսնաս, գործդ թարս պիտի գնայ:
If you see a priest in the morning, it's bad luck.

Աստուած արու եւ էգ արար, վարդապետներին ո՞վ արար:
God created women and men, but who created those clergymen?

Մեղք, յանցանք, արդարութիւն
Sin, guilt, justice

Աշխարհքը մեղքէն ծանր բան չկայ:
In this world, nothing is worse than sin.

Ոտքդ քարին զարնուի, խղճմտանքդ քննէ՛:
When you stumble on a stone, examine your conscience.

Մեղքը սամուր քուրք (մուշտակ) ըլնի, վրադ մի՛ առնի:
Even if guilt is a sable coat, don't take it on!

Մարդը քուն, մեղքը զարթուն:
Man asleep, his sins at work.

Մարդ որ կայ, մեղքի տուն ա:
Man is a house of sin.

Ամէն մարդի մեղքը իրանից կ'ուզեն:
Everybody must account for his own sins.

Մեղաւորին ո՞վ է տուել արքայութիւն:
Who has ever granted heaven to the guilty?

Ես մեղաւոր, դուն մեղաւոր, արքայութիւն ո՞վ երթայ:
If I am a sinner and you are a sinner, for whom is paradise?

Սոխ չեմ կերել, որ բերանս այրի:
I didn't eat onions for my mouth to burn.
[Used by people who insist on their innocence.]

Մեղաւորի մեղքէն թմրի արդարը:
From the sins of the guilty the innocent suffer.

Մեղաւորին փուշը տոշակին վրան է:
The thorns of the guilty are on their mattresses.

Պահք չբռնողը Ջատկին համը չի գիտեր:
He who doesn't fast won't enjoy Easter.

***Մեղքերը երկար գաղտնի չեն մնար
You cannot hide your sins for long***

***Թաքուն բանը քառասուն օրից յայտնի կը լինի:
What's done in secret will be known within forty days.***

***Թաքուն ցուլ եկողը, աշկարայ (ակնյայտօրեն) կը ծնի:
You get pregnant in secret, you give birth in public.***

***Նիզակը պարկը չի մնայ:
You cannot keep an arrow in a sack.***

***Գիշերուայ գողին ցերեկով կը բռնեն:
A thief of the night will be caught in daylight.***

***Գողուն-բողուն, քառասուն օր է:
A thief and a harlot can hide only forty days.***

***Երազ
Dreams***

***Երազն առաջնախօս ա:
Dreams are a foreboding.***

***Երազ կայ, որ օրն է կատարուում, երազ էլ կայ՝ տարին:
Some dreams come true in a day, others in a year.***

***Երազը մինչեւ կեսօր կը կատարուի:
A dream comes true till midday.***

***Գէշ տեղ պառկողը գէշ երազներ կը տեսնէ:
He who sleeps in bad places, will dream bad dreams.***

***Սովածը հաց կը տեսնի երազում, ծարաւը՝ ջուր:
The hungry dream of bread, the thirsty of water.***

***Հաւը երազը կորեկ է տեսել:
The hungry dream of bread, the thirsty of water.***

Նախապաշարում **Superstition**

Չար աչքը քարն էլ ճաքացնում ա:
An evil eye can crack even a stone.

Աչքն գտոյնէն (աշխարհ) ա կերեր:
The (evil) eye has eaten up the world.

Երկու աչքը մէկ գրողի բան կ'անէ:
Two evil eyes can do the work of a grogh.*

Հասակով դաճածէն հեռու կեցիր, զի Աստուած գլխուն է զարկեր:
Stay away from dwarves, for God has struck them on the head.

Շէկ մարդի աչքը զօրեղ կ'ըլնի:
The blond man's eye is powerful.

Փախի՛ր մազոտ կնիկէն, անմազ մարդէն:
Stay away from hairy women and hairless men.

Ծիծեռնակը տան շինութիւն է, ծիտը տան աւերութիւն է:
A swallow brings fortune to a house, a sparrow brings ruin.

Կատուն թաթիկներովը երեսը լուաց, գիտցի՛ր որ անձրեւ պիտի գայ:
When the cat washes its face with its paws, rain will fall.

Ամանդ լպստի, որ կնիկդ սիրուն լինի:
Sop up your plate, so your wife will be beautiful.

Երեխի եղունգն ու մազը մէկ տարի չեն կտրի:
You should not cut a baby's nails and hair for a year.

Ուրախութիւնից մազն է երկարում, տարտից՝ եղունգը:
Joy makes the hair grow; worry the nails.

Չճնած երեխին չոր մի՛ կարի:
Do not sew clothes for an unborn baby.

Հանք (հանելուկ) մի՛ ըսէ, թանկութիւն կ'ըլնի:
Don't tell a riddle, prices will go up.

Դատարկ կուժ եկաւ առաջդ, բանդ ձախ պիտի երթայ:
If you see someone coming toward you with an empty pitcher, things will go wrong for you.

Կնիկմարդը հաւ չի մորթի:
A woman should not slaughter a chicken.

Զեռքդ կը քերուի, խամեթ պիտի գայ:
If your palm is itchy, good luck is on its way.

Օջախը ջրով չեն հանգցնի:
Don't put out the odjakh's fire with water.*

Օջախին մոխիրը քամուն չեն տայ:
You don't cast the ashes of the odjakh to the wind.*

Հիւանդը որ գնալիք է, մատաղը չի օգնէ:
If the sick must go, the matagh won't help .*
[i.e., Sacrifices won't help if the sick is destined to die.]

Մատաղի միսով փոր չի կշտանայ:
You should not eat your fill of matagh.*

Սատանան խառնած թնդըն կ'ելլէ:
The devil will appear from a stirred toneer.*

Սատանան կրակից փախ ա:
The devil avoids the fire.

Սատանէն կիրակնամտին չարութիւն կ'անէ:
On Sunday's eve, the devil does evil.

Խաչն եկաւ, դէւ խափանաւ:
(When) the cross appeared, the dev was barred.*

Գիշերը սուփրէն (սեղանի ծածկոց) չեն թափ տայ:
You should not shake out a tablecloth in the evening.

Գիշերուայ սաբրը (փռնգտոց) խէր ա:
It's good luck to sneeze in the evening.

Անէծք եւ օրհնէնք *Cursing and Blessing*

Անէծքն անիծողին կը դառնայ:
The curse will return to the curser.

Անէծքը երկու բերնանի սուր ա:
A curse is a double-edged sword.

Անիրաւ անէծքը չի բռնի:
An unjust curse will not work.

Անէծքը գիրկ մը քար է. (մէկը չդպչի միւսը կը դպչի):
Cursing is a skirtful of stones; (if one doesn't hit, another will).

Օրհնանքն ու անէծքը երկու բերնանի թուր է. հա՛մ դէսն ա կտրոււմ, հա՛մ դէնը:
The blessing and the curse are a double-edged sword; it cuts both ways.

Հօր ձէնն Աստուած թէզ (շուտ) կը լսի:
God will heed a father's voice quickly.

Սեւագլխի անէծքը քարին որ դիպչի, քարը կը պատռի:
Even a stone would crack, if a priest cursed it.

Մօր մէկ օրհնէնքը, օխտը վարդապետի անէծք կը քանդէ:
A mother's blessing will lift the curse of seven priests.

Մօր անէծքը չի բռնի, ծծի կաթը դէմ կ'առնի:
A mother's curse won't work; the milk she has given from her breast will block it.

Յաջողութիւն եւ ճախորդութիւն *Good and bad fortune*

Ամէն օր ջուրը գերան չի բերի:
Not everyday does the water carry logs.

Ամէն ջուր գերան չի բերի:
Not all waters carry logs.

Ամէն օր կուժը ջուր չի բերի:
The pitcher does not bring water everyday.

Մարդու մամը ամէն օր տղայ չի բերի:
Mothers don't give birth to a son everyday.

Ամէն հաւկիթ երկու դեղնուց չ'ունենար:
Not every egg will have two yolks.

Ձէ եղեր գիշեր, որ չէ լուսցեր:
There has never been a night not followed by daylight.

Յերեկով ման եկածս, գիշերով հանդիպեց:
What I was looking for in daylight I found at night.

**«Ես բախտ չունիմ»
“I am unlucky”**

Իմ հացս աղ չունի:
My bread has no salt.
[i.e., My good acts are not known.]

Էշը մերն է, որ փալան չունի:
It's only our donkey that has no saddle.

Իմ կարգս որ հասնի, ամէն բան կը չորնայ:
When it is my turn, everything dries up.

Աշխարհ ցանեց, լաւ բուսաւ. ես ցանեցի, մէջ ու դուրս բուսաւ:
Everybody sowed, it grew strong; I sowed, it grew all wrong.

Ամէնքը արտ կը ցանեն, շիտակ կը բուսնի, իմ ցանածս ծուռ կը բուսնի:
Everyone else's grain grows straight, mine grows crooked.

Աշխարհքս լայնարձակ է, ի՛նչ օգուտ որ սիրտս նեղ է:
The world is immense, what is it to me if my heart is tense?

Մենք ճրագլիս ունենանք, իշի պոչն էլ լիս կը տայ:
If we happen to have candle-light, even the donkey's tail will light up.

Ամառուայ արեւէն ի՛նչ հասկցայ, որ ձմեռուայ արեւէն ի՛նչ հասկնամ:

What did I gain from the summer sun that I should now gain from the winter sun?

Առաւօտուայ արեւից ի՛նչ տաքացայ, որ իրիկնապահին ի՛նչ տաքանամ:

What warmth did I get from the morning sun that I should get any warmth from the evening sun?

Մենք գողութեան ելանք, լուսնկան առջի իրիկուընէ ծագեցաւ:


When we went out to steal, the moon had risen the night before.

Երկու սափաթ (կողով) քաք ուղարկեն մեր քաղաքը, մէկը մեր տունը կու գայ:

If they send two baskets of shit to our city, one will come to our house.

Երկինքէն փալան թափի, մեր ճիտը չ'իյնար:

If saddles fall from the sky, not one would fall on our backs.



Chapter 8

ԳԻՒՂ ԵՒ ԲԱՂԱՔ COUNTRY AND CITY

Themes

Հայուն և ուրիշներուն մասին159
About Armenians and others

Հայրենիքի եւ զարիպի (պանդուխտ) մասին160
*About the fatherland and the gharib**

Բնութիւն եւ գիւղական կեանք161
Nature and country life

Գիւղացի եւ քաղաքացի162
Peasant and townsman

Ընտանի կենդանիներ 164
Domestic animals

Հայուն եւ ուրիշներուն մասին *About Armenians and others*

Հայը մինչեւ չյոգնի, չի նստի:
The Armenian won't sit down if he isn't tired.

Հայի վերջին խելքն է գովելի:
Armenians have good ideas in hindsight.

Քիչ ենք, բայց հայ ենք:
We are not many, but we are Armenians.

(Հայուն) մէկը քիչ է, երկուսը՝ շատ:
One (Armenian) is too few; two are too many.
[i.e., Armenians are incompatible.]

Հայ ենք ու վայ ենք:
We are Armenians, and we are a pain.

Հայուն օրօրոց կոտորուկ ա:
The cradle of the Armenian is crushed.

Հայի «տուէ՛ք-տուէ՛ք»-ին ռաստ չես եկել:
You have never experienced the Armenian's "Charge!"
[i.e., Armenians can be rebellious.]

Հայ տղամարդու սիրտը, հայ ծովին անդունդը, երկուսն մոլթ են:
The hearts of Armenian men and the bottom of the sea are secrets.

Թուրքն ըսեր է, կէր, յետոյ խօսէ: Հայն ըսեր է, թէ՛ կեր, թէ՛ խօսէ:
The Turk said, "Eat first and speak afterwards." The Armenian said, "Eat and speak at the same time."

Ուր երեք հայ իրար մօտ հաւաքուի, այնտեղ երկու կուսակցու-
թիւն կստեղծուի:
Where three Armenians get together, there will be two parties created.

Գինի, էրմէնին (հայի) տինի (հաւատ):
Wine is the Armenians' faith.

Հայրենիքի եւ դարիպի (պանդուխտ) մասին
About the fatherland and the gharib*

Հայրենեաց քարինքը աւելի տաք են քան Բաբելոնի փռները:
The stones of my native country are warmer than the ovens of Babylon.

Հայի աշխարհ, վայի աշխարհ:
World of Armenians, world of sorrow.

Հայաստան, որբաստան:
Land of Armenians, land of orphans.

Հայաստան, քարաստան:
Land of Armenians, land of stones.

Ամէն փէտ չերեփ չի լինի, ամէն սար՝ Մասիս:
Not every wood can make a ladle, not every mountain can match Masis.
[Mount Ararat is also called ‘Masis’ in Armenian.]

Ղարիպին հացը լեղի ա, ջուրը աղու (թունաւոր):
A gharib’s bread is bitter, his water poisonous.*

Ղարիպի ուշքը միշտ ետեւն ա:
A gharib’s heart is always back home.*

Ղարիպի հալը դարիպը կ’իմանայ:
Only a gharib knows how a gharib feels.*

Հօրս ու մօրս արիւնը քաղցր ա, վաթանի հողն ու ջուրն անուշ:
My father’s and my mother’s blood are dear; my country’s earth and water are sweet.

Ղարիպը բամբասուեց, գանգատաւորը շատացաւ:
When a gharib is blamed, many plaintiffs will come forward.*

Ղարիպի համար մի օրը մի տարի ա:
For a gharib, a day seems a year.*

Ղարիպ մարդը օտար տեղ երես չի ունենայ:
In a strange country, a gharib will have no face.*

Բնութիւն եւ գիւղական կեանք
Nature and country life

Մարտի իննին, լազլազը (արագիլը) բնին:
On the ninth of March, storks are back in their arch.
[Lit.: ... in their nest.]

Վերջացաւ մարտս, գնաց տարտս:
March has ended, my worries have ended.

Մարտը մէկ օրն օխտ (եօթը) կնիկ կը փոխայ:
In one day, March can change seven wives.

Մարտ, խենդ մարդ:
March, crazy man.

Ով որ ապրիլին ցանայ, ապրիլ ու քաղայ, ով որ մայիսին ցանայ, մզմզուկ (չնչին բան) քաղայ:
He who sows in April will reap great amount; he who sows in May – not even a pound.

Մինչեւ յունիս, ունիս նէ, ունիս, չունիս նէ, չունիս:
By June, if you have it, you have it; if you don't, won't have it.

Տարուան չորս եղանակները հարեւան են, էն էլ մին-մնու հակառակ:
The four seasons are neighbors, all against each other.

Էշը որ գռաց, գարուն ա:
When the donkey roars, it's spring.

Ամառուայ անձրեւին, ձմեռուայ արեգակին մի՛ հաւատա:
Don't rely on summer's rain or winter's sunshine.

Ամռան տղան, վարդի տղայ, ձմռան տղան, մոխրի տղայ:
A summer child, a rosy child; a winter child, an ashy child.

Ամառուայ փուշը, ձմեռուայ նուշը:
A summer splinter is an almond in winter.

Ամառուկայ հասած տանձը աշունն չի տեսնի:
A pear ripened in summer doesn't last til fall.

Լաւ ծառը լաւ է վատ մարդիցը:
A good tree is better than a bad person.

Տարի կայ օրուան կը պահէ, օր կայ՝ տարուան:
Some years feed a day, some days feed a year.

Կու գայ տարին, հետը բարին:
The year comes, and the goodness comes with it.

Զմեռ բտէ՛ (պարարտացնել), գարուն կթէ՛:
In winter – feed; in summer – reap.

Հողով ա ապրում արար աշխարհը:
The whole world lives from the earth.

Ջրի մօտի ծառը արագ մեծանում ա, արագ էլ պառաւում:
A tree near the water grows quickly, but also ages quickly.

Քամու խէրն էլ շատ է, շառն էլ:
Wind does a lot of good and a lot of harm.

Զմեռուկայ վարդը կրակն է:
Fire is the winter's rose.

Գիւղացի եւ քաղաքացի *Peasant and townsman*

Ռանչպարի (հողագործի) տօշակը սեւ հողն է, բարձը՝ չոր քարը:
Black earth is the peasant's mattress, and dry stone his pillow.

Գեղացի – խաւ տեղացի:
A country man – a good man.

Գեղացու գեղեցիկը շատ կայ:
There is much beauty among peasants.

**Գեղացին մեռնի, կենէ իւր եզին կաշին մնայ կու, քաղքըցուն
ի՞նչ մնայ կու:**

*When a peasant dies, at least his ox's hide stays behind; what does
the townsman leave behind?*

Գեղի շունը քաղաք մտնէ նէ, պոչը սղմած կը քալէ:

*When a country dog comes to the city, it walks with its tail between its
legs.*

Գեղացու մէջքը որ տուգ եղաւ, ցանածը լաւ չի բուսնի:

If a peasant's back is straight, his harvest will be crooked.

Գեղացու փորը քաղքցու հացով չի կշտանայ:

You cannot fill a peasant's stomach with a townsman's food.

Գեղացին չկերած բանը չ'ուտեր:

A country man won't eat what he hasn't eaten before.

Գեղացին լաւ է, քան չարակամ իշխանը:

It's better to be a peasant than a bad-hearted prince.

Աղքատին գեղը գցա, թէ չապրի գետը գցա:

*Throw the poor man into the country; if he is still poor, throw him into
the river.*

Գեղացու խօսքը չուանի չեն դնում:

They have no esteem for the peasant's words.

Ռանչպարի խոփը ոսկի կը կտրէ:

The peasant's ploughshare is the best source of health.

**Գեղացիին աղբար կ'ըսեն, հարուստին աղա. իսկ ուտելու կոր-
կոտին գեղացիին աղա կ'ըսեն:**

They call the peasant 'brother', the rich man 'Agha', but when it
comes to eating korkot*, they call the peasant Agha*.*

Գեղցին հէջ բանից ըմանչիլ չի, հեսաբից (հաշիւ) կ'ըմանչի:

*A peasant doesn't know embarrassment, except for (financial) ac-
counts.*

Ընտանի կենդանիներ *Domestic animals*

Էծը սատանի հօրեղբոր տղեն է:
The goat is the devil's cousin.

Ուլ տեսած, սատանայ տեսած, երկուսն էլ մի բան է:
Seeing a baby goat is like seeing a devil.
[Based on the folk belief that a goat has the devil inside.]

Բուղեն (ցուլ) նախրի կեսն ա:
The bull is half the herd.

Էծը քեասիպի կովն է:
The goat is a poor man's cow.

Շունը շինականի պահապան ընկեր է:
A dog is a peasant's guardian and friend.

Շունը հաւատարիմ է, կատուն՝ գող:
The dog is faithful, the cat is a thief.

Մարդու դռան շունն էլ շնորհքին պէտք է լինի:
Even the dog at your door should look decent.


Կատուն կեղծաւոր կ'ըլնի:
The cat is two-faced.

Ամէն մարդ առաւօտեան է լուացւում, կատուն՝ իրիկունը:
People wash themselves in the morning, cats in the evening.

Լաւ ձին անգին ա, վատը՝ պատիժ:
A good horse is priceless, a bad one a pain.

Էշը մնայ - բզէ', ձին մնայ - թո՛ղ՝ գնա:
When the ass comes to a halt, jab it to go; when the horse comes to a halt, leave it and go.

Կինս կու տամ, ջորիս չեմ տայ:
I would give my wife away, but not my mule.



Chapter 9

ԿԵՆՍԱՓՈՐՁ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ EXPERIENCE AND EDUCATION

Themes

<i>Արհեստ եւ արհեստաւոր</i>	167
<i>Trade and workmen</i>	
<i>Զարգացած եւ կրթուած</i>	168
<i>Well-read and educated</i>	
<i>Խրատ ամէն փորձանքէ</i>	169
<i>Lessons drawn from misfortune</i>	
<i>Խրատ տուող միշտ կայ</i>	170
<i>There is always somebody to give advice</i>	
<i>Սովորութիւն</i>	170
<i>Habit</i>	
<i>Դաստիարակութիւն, օրինակ</i>	171
<i>Upbringing, example</i>	
<i>Փորձառութիւն</i>	172
<i>Experience</i>	
<i>Բնածին յատկութիւնները չեն փոխուիր</i>	173
<i>Innate qualities cannot be changed</i>	
<i>Գէշին հետ շփուողը կը գէշնայ</i>	176
<i>He who associates with evil becomes evil</i>	

Արհեստ եւ արհեստաւոր *Trade and workmen*

Փեշակն որ կայ, ոսկէ պիլազուկ է:
A trade is a golden bracelet.

Արհեստ ունեցողը մինչեւ կէսօրին անօթի կը մնայ, չունեցողը՝
մինչեւ իրիկուն:
With a trade you starve till midday; without one, till evening.

Արհեստը արհեստաւորի ձեռքին գերի է:
The trade is a slave in the workman's hands.

Անուստայ արհեստը հարամ է:
An unmastered trade is worthless.

Արհեստաւորը արհեստաւորին ծուռ կը նայի:
One tradesman cannot stand another.

Դերձակին ասացին, քոչի՛, ասեղը խրեց ետխէն (օձիք) ու գնաց:
They told the tailor to move; he stuck his needle in his collar and moved. [i.e., A tailor does not need many tools for his trade.]

Սովորած լաւ փեշակդ հետդ գերեզման չտանես:
Don't take a trade you have mastered to the grave.
[i.e., Teach your trade to others.]

Իր արհեստին ծուռ նայողը կուշտ չ'ուտեր:
He who dislikes his trade, will never eat his fill.

Բան տեսնողը հաճաթն (գործիք) ա:
It's the tool that does the work.

Ղանիաթն (եռանդ) ու զանիաթը (արհեստ) աղբար են:
Vigor and trade are brothers.

Մեղրը ծախողը մատը կը լպստի:
The seller of honey will lick his finger.
[i.e., A tradesman will profit from his trade.]

Լաւ հնձուորը դաշտում էլ կը հնձի, սարումն էլ:
A good reaper will reap both in the valley and on the mountain.

Կով կթողը կով կթողին չի կարող խաբել:
One cow milker cannot defraud another.

Ոչխարի ճիկեարը չոպանը կ'ուտի:
It's the shepherd who eats the liver of the sheep.
[The liver is considered to be the tastiest part of the sheep.]

Խաղողի լաւը բաղուանչին (պարտիզպան) կ'ուտի:
The best grapes go to the vineyard keeper.

Մանգաղուորի ձեռքէն մանգաղը չեն առնի:
You don't take the sickle from the reaper's hand.

Պոստանչու ընծան կամ սեխ կ'ըլի, կամ ձմերուկ:
A gift from a gardener will be either a melon or a watermelon.

Պոստանչուն սերմ չեն ծախի:
You can't sell seeds to a gardener.

Զարդացած եւ կրթուած Well-read and educated

Ով կարդայ, նա մարդ ա:
Education makes the person.

Կարդալը ոսկի պիլագուկ է:
Education is a golden bracelet.

Ուսում ստացածը սոված չի մնայ:
The learned will never starve.

Կարդալն եփուկ հաց է, դրած մարդու ծոց:
Education is a well-baked bread in the pocket.

Շատ կարդացողը հասկացող կ'եղնի:
A well-educated person is an understanding person.

Բանն էն չի, որ ասեմ խրատ, բանն էն է, որ առնես վրադ:
The point is not that I give advice, but rather that you take it.

Սեւ գիրքը կարմիր օրեր կը բերէ:
The black book will bring red days.
[“Black” is a metaphor for the color of the print, and “red” for “brightness, bliss, happiness.”]

Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես:
You are as many a person as the languages you know.

Մանկութեան ուսումը քարի վրայ փորուածք է, ծերութեան ուսումը սառի վրայ գրուածք է:
What you learned in youth is carved in stone; what you learned in old age is written on ice.

Գիտութիւն, հարստութիւն:
Scholarship – prosperity.

Խրատ ամէն փորձանքէ Lessons drawn from misfortune

Ամէն փորձանքին մէկ-մէկ խրատ:
From each pitfall (you learn) a lesson.

Էշը որ մի տեղ ցեխն ընկաւ, էլ էն տեղովը չի անցնի:
If a donkey sinks in a puddle, he'll never take that route again.

Ջուրը չիցնողը լողալ չի սորվիր:
If you don't jump into the water, you'll never learn to swim.

Հէքիմն էն է, որ գլուխն է եկել:
The real doctor is he who has endured much.

Մինչեւ սէլը չը շրջի, ճամբէն չի դրստուի:
The road won't be fixed until the carriage turns over.

Ծովն անց կենողը առուով չի խեղդուի:
He who crossed the sea won't fear the brook.

Խրատ տուող միշտ կայ
There is always somebody to give advice

Սէլը որ կոտորուի, խրատ տուող շատ կ'ըլնի:
When the carriage breaks down, there will be many to give advice.

Խրատ տուողը շատ կ'ըլլի, հաց տուողը՝ քիչ:
To give advice there will be many; to give bread very few.

Մարդուս խրատն իր ծոցն է:
Your advice is under your chest.
[i.e. Do not expect others to advise you.]

Տակէս ելեր է, ինծի լող կը սորվեցնէ:
He came out of me, and teaches me how to swim.
[Cited mostly by parents whose children try to instruct them. Originally a vulgar allusion to excrement floating in the water.]

Սովորութիւն
Habit

Սորվածը չի կայնի:
He who is in the habit will never quit.

Սովորութիւնը բնութիւն կ'ըլլայ:
Habit becomes nature.

Ոսկոր բերող շունը ոսկոր ալ կը տանի:
A dog that brings bones will also carry away bones.

Սովորին մի՛ պակսացնի, անսովորին մի՛ սովորցնի:
Do not deprive the accustomed; do not accustom the deprived.

Էշն իր չկերած խոտն որ ուտէ, գլուխը կ'ուռի:
When a donkey eats a grass he never ate before, his head swells.
[In Armenian, “to get a swollen head” means “to get sick.”]

Աչխարհքը ոնց բռնես, քնենց էլ կ'երթայ:
As you handle things in this world, so they go.

*Ո'չ կռնակդ երկու լաթի սորվեցուր, ո'չ փորդ երկու հացի:
Don't let your back get used to two shirts, nor your stomach to two breads.*

*Սորվուկն ու կատղուկը մէկ է:
He who gets used (to good life), can easily go wild.*

Դաստիարակութիւն, օրինակ Upbringing, example

*Տղան չծեծողը ծունկը կը ծեծէ:
He who doesn't beat his child will beat his knees.*

*Ծուռ ծառը պզտիկուց կը շտկեն:
A crooked tree must be straightened out when young.*

*Եզ կայ լեզուով կ'երթայ, եզ՝ չիպղով (մտրակ):
Some oxen move with words, others with whips.*

*Հազար անգամ թուք ու մուր, մէկ անգամ օրինակ տուր:
Instead of scolding a thousand times, set an example once.*

*Էշը իշի մօտ կապես, եա խուն (սովորութիւն) կը սովորի, եա խասիւթը (բնաւորութիւնը):
If you put two donkeys together, they will pick up each others' habits and manner.*

*Աչքն ինչ տեսնի, էն էլ կ'անի:
The eyes do what they see.*

*Լաւ մարդու հետ տոտա՛ (քալէ), լաւ օրինակ ա՛ռ:
Walk with a good person, learn a good lesson.*

*Ծաղիկը ծաղկին նայելով կը բացուի:
A flower blooms by seeing others bloom.*

*Սեղաւորին մէրը չի բերել, դրկցոց մօտէն է ուսէ:
Felons are not born felons (from their mother), they have been taught by their neighbors.*

Փորձառութիւն *Experience*

Աշխարհքս տես ու ուս է:
The world consists of seeing and learning.

Շատ բան կայ, մինչեւ չսորվիս, չես կարող անել. շատ բան էլ կայ, մինչեւ չանես, չես սորվի:
There are things you cannot do until you learn them; there are other things you cannot learn until you do them.

Փորձուած թանը լաւ աս, քանց անփորձ մածունը:
The tasted tan is better than the untasted madzoun*.*

Փորձած սատանէն լաւ է, քանց անփորձ հրեշտակը:
The devil you know is better than the unknown angel.

Շատ ապրողը շատ բան չի իմանայ, շատ ման եկողը շատ բան կ'իմանայ:
He who lives long doesn't know much, but he who travels a lot does.

Չփորձած ձիու ետեւից մի' անցնիլ:
Don't walk behind a horse you haven't tried.

Թաղա (նոր) շորը հնի վրայ կը ձեւեն:
They cut a new dress from the pattern of an old one.

Չփորձած մարդից պարտք չառնես:
Don't borrow money from someone you have not tested.

Չփորձած մարդու սիրտդ չբանաս:
Don't confide to a person you haven't tried.

Փորձած հարեւանը անփորձ բարեկամից լաւ է:
A neighbor who has proven his worth is better than a relative who hasn't.

Ով քիչ է փորձել, քիչ էլ գիտի:
He who has experienced little knows little.

Շատ ապրողը շատ բան կը տեսնէ:
He who lives long sees a lot.

Կրկին փորձելը յիմարութիւն է:
Trying all over again is foolish.

Մինչեւ մի մարդու հետ մի փութ աղ չուտես, չես ճանչնայ:
You don't know a person until you've eaten a pout of salt with him.*

Ուստէն էն է, որ գլուխն է եկել:
Experience makes the master.

Լաւ օրը առաւօտը կ'երեւայ, լաւ տարին գարնանը:
A good day shows in the morning; a good year in the spring.

Բնածին յատկութիւնները չեն փոխուիր
Innate qualities cannot be changed

Ծռու փէտը տաշելով չի շտկի:
A crooked piece of wood can't be straightened by planing it.

Գայլը բուրդը կը փոխէ, բայց բնոյթը չի փոխեր:
The wolf changes its coat, but not its nature.

Կարմիր կովը իր կաշուցը դուրս չի գայ:
A red cow will never abandon its skin.

Սեւ շունը չի սիւստակի:
A black dog will never turn white.

Վատ օրը կը լաւանայ, վատ մարդը չի լաւանայ:
A bad day can improve, a bad person cannot.

Օձն իրա շապիկը կը փոխէ, բնութիւնը չի փոխէ:
The snake will change its skin, but not its nature.

Փիս մարդը, Զատիկին էլ փիս կ'ըլնի:
A bad person will be bad even at Easter.

Կաթի հետ մտածը, հոգու հետ դուրս կը գայ:
What goes in with (mother's) milk, comes out with the soul.

Շան պոչը կաղապար դնելով չի չիտկի:
You cannot straighten the dog's tail by moulding it.

Խոզն իր խոզութիւնը չի թողուր:
A pig will never give up its piggery.

Աւշանը ինչքան բեջարես (խնամել), ուհան չի դառնայ:
No matter how much care you give to weeds, they won't become basil.

Թարխունը իր քոքին կը բուսնի:
Tarragon grows from its roots.

Սօրուց խենդ ըլլողին, սուրբ Սարգիսն ի՞նչ անի:
What can Saint Sarkis do for someone born mad?
[Saint Sarkis is one of the patron saints in the Armenian Christian faith.]

Ագռաւը ինչքան լողանայ, դազ չի լինի:
No matter how often it bathes, the raven will never become a goose.

Կովի կէօրա մողիկ կ'եղնի:
Like cow, like calf.

Ծառն իր պտղէն կը ճանաչուի:
You recognize a tree by its fruit.

Պլղուրը բրինձ չի լինի:
Boulgour cannot become rice.*

Շան պոչը կտրելով, անմեղ գառ չի դառնայ:
By cutting its tail, the dog won't become an innocent lamb.

Թուխ աչքը մօրուց պիտի, դեղ դրածը թեզ կ'աւրի:
Black eyes must be innate; what is painted will fade.

Տղեն տղից կ'ըլնի:
A boy comes from a boy.

Իշի քուռակը վերջն էշ կը դառնայ:
The child of an ass will end up as an ass.

Էշը թիմարելով նժոյգ չի դառնայ:
You cannot train a donkey to become a horse.

Էշը ջոջանալով թաւաբաշի (ախոռապետ) չի դառնայ:
Just by growing big, a donkey won't become master of the barn.

Շնէն գառ չի ծնի:
From a dog, no lamb will be born.

Օձի ձագը հաւի ձագ չի լինի:
The snake's young cannot become a chick.

Խեւ աղջիկը, խեւ հարս կ'ըլնի, խեւ հարսը՝ խեւ տանտիկին:
A crazy maid will turn into a crazy wife; a crazy bride, into a crazy housewife.

Էշը հարիւր անգամ Երուսաղէմ է գնացել, նորէն էշ է մնացել:
After a hundred visits to Jerusalem, the ass remained an ass.

Շունը իր շնութիւնը կ'անի:
A dog will do its doggery.

Խնձորն իր ծառի տակ կ'ընկնի:
The apple falls under its tree.

Միրանն իր ծառի տակին վէր կ'ընկնի:
The apricot falls under its tree.

Ամէն բան տեղը կու գայ, քոսայի (անմազի) մօրուքը չի գար:
Everything can come back, only the beard on a eunuch's face can't.

Գէշին հետ շփուողը կը գէշնայ
He who associates with evil becomes evil


Մրոտ պտուկին քսուողը կը մրոտի:
He who leans against a sooty jug gets sooty.

Ագռակին ընկեր եղողը աղբէն դուրս չ'ելլար:
He who takes the raven for his companion is bound to stay in the dung.

Շան հետ լինես շահոտ կը գայ:
If you live among dogs, you will stink like a dog.

Գողին հետ ապրողը գողութիւն կը սորվի:
He who lives with thieves learns to steal.

Շան հետ պառկողը ոջլի հետ կը վեր կենայ:
He who goes to bed with a dog wakes up with lice.



Chapter 10

ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ, ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ INJUSTICE, WEALTH, SECURITY

Themes

<i>Անարդարություն</i>179 <i>Injustice</i>	179
<i>Բռնություն և համերաշխություն</i>181 <i>Violence and harmony</i>	181
<i>Դժուար կացություններ</i>182 <i>Difficult situations</i>	182
<i>Միությունը զորություն է</i>183 <i>Unity is strength</i>	183
<i>Հարուստ և աղքատ</i>184 <i>Rich and poor</i>	184
<i>Մէկը կը վայելէ, միւսը կը տուժէ</i>188 <i>One has the pleasure, the other the pain</i>	188
<i>Ուժ, բռնություն, օրէնք, դատաստան</i>188 <i>Power, force, law, judgment</i>	188

<i>Որքան ծռիս, կը բեռնաւորեն</i>	189
<i>The more you bow, the more they load you</i>	
<i>Ապահովութիւն</i>	190
<i>Security</i>	
<i>Դրամ, ապրանք, առեւտուր</i>	191
<i>Money, goods, commerce</i>	
<i>Պարտք, կաշառք, տոկոս</i>	195
<i>Debt, bribery, interest</i>	
<i>Սուղ, աժան</i>	197
<i>Expensive, cheap</i>	

Անարդարութիւն *Injustice*

Աշխարհն արօտ, մենք մէջը կարօտ:
The world is a plentiful mead, yet we are in need.

Աշխարհ ծով ա, մենք ծարաւ ենք:
The world is a sea, yet we are thirsty.
[Arm. ծով “sea” metaphor for abundance.]

Աշխարհքը ծով, մեզ համար սով:
The world has plenty, for us it's empty.

Մէկին ծով, միւսին սով:
One gets the feast [lit.: sea], the other the famine.

Մինն պուտ-պուտ, մինն փութ-փութ:
For some it drizzles, for others it pours.

Մէկն ուտելով կը մեռնի, մէկն աչելով (նայելով):
Some die from eating, some from watching others eat.

Աշխարհքին մէկդին կու լայ, մէկդին կը խնդայ:
One side of the world is crying, the other side is laughing.

Շատը շատի մօտ կ'երթայ:
Plenty goes to plenty.

Բերան կայ, հաց չկայ, հաց կայ, բերան չկայ:
Where there are mouths, there is no bread; where there is bread, there are no mouths.

Շատ դատողին, չալէ շապիկ, քիչ դատողին, չարէ շապիկ:
For the hard work a woolen shirt; for the light work a silk shirt.

Ո՛վ դատի, ո՛վ ուտի:
Who is working, who is eating?

Ես բրդեմ, դո՞ւ խրթեա:
I should do the crumbling, you should do the gulping?

Աշխատի խաչիկ, ուտի տաճիկ:
Khachik does the work, tachik does the eating.*

Ես եփեցի, դուն կերար:
I cooked it, you ate it.

Եզն աշխատի, ձին ուտի:
The ox does the deed, the horse gets the feed.

Քաշողը գիտէ, աշողն (դիտող) ի՞նչ գիտէ:
The sufferer [the worker] knows; what does the onlooker know?

Էշին հարսանիք կանչեցին, ասեց՝ հարկաւ ջուր կրելու էք տանում:
They called the donkey to a wedding; it said, “I am sure, you want me to carry your water.”

Ուղտին ասացին. «Աչքդ լոյս, քեզ որդի է ծնուել»: Ասաց. «Ի՞նչ անեմ, որ իմ բեռը ինձանից չի պակասի»:
They told the camel, “Good news! A son is born to you.” He answered, “What do I care, if it won’t lessen my load?”

Զուտողի մալը ուտողին հալալ ա:
The wealth of those who do not spend it is well-deserved by those who spend it.

Շատ դատողին քիչն ա պաշար:
He who works hard has a small share.

Ծեծեմ ես, ծեծկուրմ ես. երկուք դու, մէկ ե՞ս:
All the struggle is for me; why two for you, and one for me?

Մեծ ձուկը պզտիկին կուլ կու տայ:
Big fish will swallow the small.

Խօսքը դատողինը չի, ուտողինն ա:
It’s the eater, not the worker who has the final say.

Ուտողը չգիտէ, բրդողը գիտէ:
The eater doesn’t know (the hardship), the worker does.

Հաստ ու բարակ մի գին է, վաճ բարակ մանողին:

Thick or thin, it is the same pay; pity the one who spins thin all day.

[About the spinning of wool which is paid by the weight.]

Ողորմի ուտողին, ո՛չ ողորմի բրդողին:

Blessed is the eater, not the worker.

Զօռն (ուժեղ) անգորին կերել ա:

The powerful has eaten up the powerless.

Զրկանքով հարստացողի վերջը փուճ է:

He who gets rich by depriving himself is doomed.

Կ'ապրի զրկուողը, չի ապրի զրկողը:

The deprived, not the depriver, will thrive.

Աշխատողը անօթի չի մնայ:

A worker will not starve.

Ով աշխատի, նա ուտի:

He who works – eats.

Բաղդադ էլ խուրմա չատ կայ. ինձի ի՛նչ:

There are a lot of dates in Baghdad; what is it to me?

Գետնի յատակին ալ գանձ չատ կայ. մեզ ի՛նչ:

Many riches are under the earth; what is it to us?

Բաղը չամիչ չատ ա. ինձի ու քեզի ի՛նչ:

There are many raisins in the vineyard; what is it to you and me?

Բռնութիւն եւ համերաշխութիւն

Violence and harmony

Խաթրը չատ է քանց զօռ:

Compliance is better than violence.

Պառան էլ դժոխք չի երթայ, համա զօռով կը տանեն:

The old hag wouldn't go to hell willingly, but she was taken by force.

Դեւը դարբնոց չէր երթում, գլխին տալով տարան:
The dev didn't want to go to the forge, they took him by force.*

Թէ խաթրով չգնաս, չուանով կը տանեն:
If you don't go willingly, they will take you with a rope.

Շանը գօռով որսի չեն ղրկի:
You cannot force a dog to go hunting.

Ուժով բաց արած վարդը հոտ չի ունենայ:
A rose forced open will not have a scent.

Օձը չաւելով (դիւթելով) դուրս կը հանեն ծակից:
With charm you can lure a snake out of its hole.

Դժուար կացութիւններ *Difficult situations*

Օձուն վրայ կարիճն ալ կճեց:
After the snake bit, the scorpion stung too.

Անձրեւը ծեծածը կարկուտն էլ կը ծեծի:
What the rain hit, the hail will hit as well.

Ծովից ելանք, ընկանք ջրհեղեղ:
We got out of the sea and were caught by a flood.

Գէլից փախայ, արջի ճանկն ընկայ:
I escaped the wolf and got caught by the bear.

Կուշտ նստանք, անօթի կայնանք:
We sat down full, we got up hungry.

Ըսես՝ բոց կ'ըլնի, չըսես՝ խոց կ'ըլնի:
If you speak up, it's a war; if you don't, it's a sore.
[Lit.: If you speak up, it's a flame; if you don't, it's an ulcer.]

Վեր թքնեմ ունքս է, վար թքնեմ մօրուքս է:
I spit up, I hit my brow; I spit down, I hit my beard.

Ասես քիչ տարտ ունէանք, մեր հարսը պառկաւ՝ աղջիկ բերաւ:
*As if we didn't have enough worries, our daughter-in-law laboured
and gave birth to a girl.*

Ըսես, գէշ կ'ըլլաս, չըսես, էշ կ'ըլլաս:
If you speak up, you are nasty; if you don't, you are an ass.

Ներքեւը չեմ նստի, վերեւում էլ տեղ չկայ:
I will not sit below, and above there is no place.

Ուտէ՛ մուռտալ է, նետէ՛ ափսոս է:
If you eat it, it is dirty; if you toss it, it's a pity.

Միութիւնը զօրութիւն է *Unity is strength*

Ժողովուրդը քնած առիւծ է, որ գարթնեց՝ էլ չի քնի:
People are like sleeping lions; when they wake up, they sleep no more.

Մէջք-մէջքի որ տանք, սար շուռ կու տանք:
If we back each other up, we can overturn mountains.

Գեղ կանգնի, գերան կոտրի:
Get the village on its feet, it will smash the log to pieces.

Ընկերովի մահը հարսանիք ա:
Dying with friends is like being at a wedding.

Երկու կատու, կը խեղդեն մէկ շուն:
Two cats can strangle one dog.

Մի ձեռը ծափ չի տայ:
One hand cannot clap alone.

Աշխարհքով եղած բանը վախ չունի:
What happened to the whole world should not be feared.

Մի ծիծեռնակով գարուն չի գայ:
There is no spring with one swallow.

Մի ծաղկով գարուն չի լինի:
There is no spring with one flower.

Մէկ կակալը (ընկոյզ) տոպրակի մէջ ձէն չի հանի:
A lone walnut cannot make noise in a sack.

Հարուստ և աղքատ *Rich and poor*

Հարուստի ուժն ու հոգին գրպանում ա:
A rich man's strength and soul are in his pocket.

Աստուած հարստի կողմոց ա:
God takes the side of the rich.

Օր բանող, օր ուտող:
Daily worker, daily eater.

Հարստութիւն կայ իշխանավարի, հարստութիւն կայ՝ իշավարի:
Wealth makes some people princes, and others asses.

Սուտը աղքատին դրամագլուխն է:
Lies are the poor man's capital.

Ծակը մեծ է, կարկատանը պզտիկ:
The hole is big, the patch is small.

Ջուկը ձկան ասեց. «Դէնը պառկի».
«Ո՞րտեղ պառկեմ, երկուսս էլ մի թաւումն ենք տապակւում»:
One fish said to another, "Move over."
"Where can I move? We are both being fried in the same pan."
[On the futility of antagonism between fellow victims.]

Մէկ տունով չենք, մէկ հալով ենք:
We do not live in the same hut, but we are in the same boat.

Աղքատն ունի հաց ու պանիր, գիշերը քունը չի տանիր:
When a poor man has bread and cheese, he cannot fall asleep at night.

Շատը ուժից է, քիչը սիրուց է:

A great gift is given out of wealth, a small one out of love.

Աղքատին փորն են ճեղքեր, հազար «գալ տարի» են գտեր:

They cut the poor man's stomach and found a thousand "next year's."

[Poor people are fed promises which never come to fruition.]

Մի՛ սատկիր հչս, գարուն է բացւում, առուոյտ է ծլում:

Do not die, my donkey; spring is coming and the clover is sprouting.

Ձեղած տեղից Աստուածն էլ ա բեզարած (յոգնած):

Even God is fed up with the poor.

Հացն եղէ ձիաւոր, մենք ոտաւոր, չենք հասնի:

Bread is on horseback and we, on foot, cannot catch it.

Հարուստի գոլթանն ա աւելանում, աղքատի՝ երեխէքը:

The rich get more ploughs, the poor more kids.

Աղքատ զաղքատն է ատել, Աստուածն էլ՝ երկուսին:

The poor man hated the other poor man, and God hated both.

Աղքատը որ հաւ կ'ուտէ, եա հաւն է հիւանդ, եա աղքատը:

When a poor man eats a chicken, either he or the chicken is sick.

Սիրտս լին ա, ձեռս կարճ:

My heart is wide, my hands are tied.

[I am generous, but I am poor.]

Խեղճի ձեռը բռնող չի ըլի:

Nobody will lend a hand to the poor.

Խեղճին հաց տուող չէ, համա խելք խրատ տուող շատ կ'ըլի:

To the poor, many will give advice, but not bread.

Ձիւնն ի՛նչ ա գիտում, թէ աղքատը փէտ չունի:

How could the snow know that the poor have no firewood?

Քառասուն գող մի չպլաղի (մերկ) չեն կարացել թալանել:

Forty thieves couldn't rob a naked man.

Գողն եկաւ, սեւերես գնաց:
The thief came, and he left in shame.

Տունը պարան մը չկայ, որ կախուի:
He doesn't even have a rope to hang himself.

Աղքատին երեսը նայող չկայ:
Nobody bothers with the poor.

Ոչ տուն ունեմ դուռը վրէն, ոչ էլ թոնիր խուփը վրէն:
I have no house with a door on it, and no toneer with a lid on it.*
[i.e., I am very poor.]

Աղքատին հացն ուտողը չի կշտանար:
You cannot satisfy your hunger with a poor man's bread.

Աղքատի ունեցածը հարուստի որսն է:
The poor man's possessions are the rich man's prey.

Թէ ունիս, իմը դունն ես, թէ չունիս, իմ դեւը դունն ես:
If you have (money) you are my love, if you don't, you are my dev.*

Աղէն բարկանայ, աղէն զիս կը ծեծէ, ես բարկանամ, աղէն զիս կը ծեծէ:
When the boss gets angry, he beats me up; when I get angry, the boss beats me up.

Աստուած աղքատը խնդացնել ուզէ նէ, էշը կորսնցնել, վերջն ալ գտնել կու տայ:
When God wants to make a poor man happy, he makes him lose his donkey, and lets him find it again.

Ունեցողի համար ամէն օր Զատիկ ա:
For the rich every day is Easter.

Անուշ քուն կ'ըլլայ, ում կողը տաք է:
You sleep well when your waist is warm.
[In old times, money was kept in a special belt; hence a 'warm waist'.]

Հարստի աղջիկին առնելն ա դժուար, պահելը հեշտ ա:
The rich man's daughter is hard to get (as a wife), but easy to keep.

Հարուստ մարդը օձ կերաւ, ասին, դեղ աւաղքատը կերաւ, ասին՝ սոված աւ:

When the rich man ate a snake, they said it was a remedy; when the poor man did, they said he was hungry.

Մինչեւ հարուստը բարակի, աղքատի հոգին դուրս կու գայ:

By the time the rich get thinner, the poor have faded away.

Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է:

There is life like iron and life like silver.

Մէկին որ փողն աւելնայ, տանը սիւնը ծուռ կ'երեւնայ:

As one gets richer, the pillar of his house seems crooked to him.

Հարստի հարստութեան չես կարող հասնիլ, դրացի եղիր նրան:

If you cannot attain the rich man's wealth, become his neighbor.

Հարստութիւնը անքուն կրակ է. ունեցողին հանգիստ չի տալիս:

Wealth is a fierce fire: it gives its owner no peace.

Հարստութիւնը գէշին կը սիրունացնի, լալին լեզու կը տայ, չղախին ջիւխտ ոտք, քուռին ալ երկու աչք:

Riches give beauty to the ugly, speech to the dumb, feet to the crippled, and two eyes to the blind.

Ով որ փող ունի, խելք չունի. ով որ խելք ունի, փող չունի:

He who has money has no brains; he who has brains has no money.

Ո՞ւմ խօսքը անցուկ կ'ըլլայ: Հարուստին ու գեղեցիկին:

Who is always listened to? The wealthy and the handsome.

Պզտիկ մարդիկ, մեծ-մեծ երազներ կը տեսնեն:

Small people have great dreams.

Ի՞նչ անեմ ոսկի լազանը (ամանը), որ մէջը արիւն պիտի թքեմ:

What good is a golden basin, if I am to spit blood in it?

Հարուստը մեռնի, գեղն երերայ, աղքատը մեռնի, մարդ չիմանայ:

When a rich man dies, the whole village flares; when a poor man dies, no one cares.

Մէկը կը վայելէ, միւսը կը տուժէ
One has the pleasure, the other the pain

Պապին կերածը թոռան ակռան կ'առնէ:
What a grandfather ate, his grandson's teeth will sense.

Ուտողը կերաւ, լպստողը մէջտեղ ընկաւ:
He who ate it got away; he who licked it had to pay.

Ձին ու ջորին կռուան, էշը ոտատակ գնաց:
The horse and the mule fought; the donkey got underfoot.

Ուժ, բռնութիւն, օրէնք, դատաստան
Power, force, law, judgment

Իրաւունք կայ, օրէնք չկայ:
There are rights, but no laws.

Դատաւորին աչք չկայ, ականջ կայ:
The judge has no eyes, he has ears.

Մեռելից խարջ չեն ուզի:
They don't ask dues from the dead.

Մեծաւորը որ կամուրջ լինի, վրիցը մի' անցկենալ:
Don't go over the boss, even if he is a bridge.

Թագաւորն էլ թագի լայեղ (արժանի) պիտի:
Even a king should be worthy of his crown.

Օրէնքն հարստի համար է գրած, պատիժն՝ աղքատի:
Law is written for the rich, punishment for the poor.

Դահլիճ կայ, որ խիղճ ունի, դատաւոր կայ, խիղճը մեռած:
There are hangmen with souls, and judges with dead souls.

Ո՞վ գողացաւ կարագը, ո՞ւմ քչեցին մարագը:
Who stole the butter, who ended up in the gutter?
[Lit.: ..., “who was sent to the hayloft?”]

Զօռը որ տանէն ներս մտնի, դատաստանն երթիքէն կ'ելնի:
When violence enters the house, justice escapes through the skylight.

Սուր մանգաղը քոնն է, ամա հանդը բաժանովի է:
The sharp sickle is yours, but the field is not yours alone.

Բանտի քանդածը Աստուած չի քանդի:
What the jail can destroy, God cannot.
[Years in jail can destroy a household.]

Որքան ծռիս, կը բեռնաւորեն
The more you bow, the more they load you

Շալկես, առնող չկայ, ալկես՝ առնող չատ:
If you carry your load – no one will take it off you; if you give it away, many will.

Բեռը չալկողի չալակին կը դնեն:
They load the burden on those who carry it.

Տաւէն (ուղտ) էլ մեծ է, համա կը չոքեցնեն, բեռ կը դնեն վրան:
The camel is huge, but they force him on his knees to load him.

Իշին որ խոնարհ տեսնեն, ջուխտ կը նստեն:
When they see that the donkey is humble, two will ride on it.

Էշի բեռը քանի ծանր ըլնի, շուտ-շուտ կ'երթայ:
The more you load a donkey, the faster it goes.

Ուղտին ասին. «Աչքդ լոյս, թագաւորը քեզ կանչել ա», ասեց. «Ես գիտեմ, եա Կողբ աղի պիտի դրկի, եա Շարուր բրնձի»:
They told the camel, “Congratulations, the king has called for you.” He said, “I know, he will send me either to Koghb (region) for salt or to Sharour (region) for rice.”

Լուծը քաշող եզան վզին կը դնեն:
They yoke the ox that takes the yoke.

Էշն իր սատկիլը կ'ուզի, թաք տիրոջը վնաս տայ:
The donkey would die just to spite his master.

Կռնակ ունենամ, բեռ դնող չա՛տ:
If I have a back, many will load me.

Աւելի համբերութիւնը իշի մարտիրոսութիւն է:
Too much patience is a donkey's martyrdom.

Ապահովութիւն **Security**

Մուլքն (անշարժ գոյք) անմեռ որդի ա:
Immovable goods are (like) an immortal son.

Որտեղ հաց, էտեղ կաց:
Where you earn your bread, there you make your bed.
[Lit.: Where your bread is, there you stay.]

Որտեղ հաց, էտեղ կաց. որտեղ գինի, էտեղ քնի:
Where you earn your bread, there you make your bed; where you drink your wine, there you will recline.

Դուլլաթը (հարստութիւնը) մլքի միջին ա, մալն էսօր կայ, վաղը չկայ:
Wealth lies in immovable property; movable goods are here today, gone tomorrow.

Մուլքը սիրեկան է:
Immovable goods are lovers.

Միրաս (ժառանգութիւն), ուտես ու մուրաս:
Heritage – you spend it and go from riches to rags.

Միրասը (ժառանգութիւն) կ'ըլլայ մարագ (ախտ):
Inheritance can become a plague.

Քեաֆիլ (երաշխաւոր) եղողի ձեռքը միշտ ճեպը պիտի եղնի:
The guarantor's hand must always be in his pocket.

Մալը կ'երթայ, մալամաթը (թշնամութիւն) կը մնայ:
The fortune goes, the feud stays.

Ժառանգը տաք ձեռքով կու տան:

Heritance should be given with warm hands.

[i.e., If you have valuables to pass on, do so while you are alive.]

Բան չունիս, վկայ եղիր, պարտք չունիս՝ երաշխաւոր:

If you have no occupation, become a witness; if you have no debts, become a guarantor.

Մալ (ապրանք) ծախողը մէկ տարի կը հարստանայ, մալ առնողը մէկ տարի կ'աղքատանայ:

The seller is wealthy for a year, the buyer is poor for a year.

Ամանաթը (ի պահ տրուած առարկայ) տէրը կ'ուզի:

Pawned goods will be sought by the owner.

Դրամ, ապրանք, առեւտուր Money, goods, commerce

Փողը որ կայ, ձեռի կեղտ ա:

Money is dirt on your hands.

Փողը որ կայ, ձեռի կեղտ ա. լուանաս, կ'երթայ:

Money is (like) dirt on your hands; you wash it, it goes away.

Փողը որ կայ, ձեռի աղտ ա, էսօր կայ, էգուց չկայ:

Money is (like) dirt on your hands: here today, gone tomorrow.

Չունես փող, մտի՛ հող:

If you have no money, bury yourself.

Փողը մոլթ տեղը լոյս կու տայ:

Money lights up a dark place.

Փարէն փրկի չարէն:

Money saves you from evil.

Փողը փոքր Աստուած են անուանել:

Money is called the “little God.”

Փողի տիրոջ խօսքն ամէն տեղ կ'անցնի:
He who has money is listened to.

Հայ կիտի ստակ, բանը կու շինիս իստակ:
Blessed is money, it smoothes things like honey.

Փողը փող կ'աշխատի:
Money makes money.

Ինը տուողը տասն ալ կու տայ:
He who gives nine will give ten as well.

Փողն ամէնքն են աշխատում, բանը պահելն է:
Many make money; keeping is the thing.

Փարա եղնի, թէ չէ փարայի տեղ շատ կայ:
The thing is to have money; to spend it, there will be many ways.

Փարան նեղ օրուայ համար է:
Money is for tight days.

Փող ունեցար աղա ես, փող չունեցար ծառայ ես:
If you have money, you are a sir, if you have none, you are a servant.

Փարա եղաւ, աշխարհ ձեռքդ կը պագին:
If you have money, the world will kiss your hand.

Փարան լեզու չունեցողի բերանը լեզու կը դնէ:
Money gives a tongue to the mute.

Ճեհնեմ (դրախտ) ու ճեննէթ (դժողք) տանողը փարան է:
It's money that takes you to heaven or hell.

Փողի կնիքը ճանչցողը, ո՛չ հոգի ունի, ո՛չ հաւատ:
He who knows money's worth has neither soul nor faith.

Ստակ վաստկողին խելքը մէկ, թոփ անողին տասնումէկ:
The money-maker has one brain, the money-saver eleven brains.

Մարդուս բարեկամը իր գրպանն է:
Your best friend is your pocket.

Փողից սարերն էլ են վախենում:
Even mountains fear money.

Ստակը սարեր կը գըջէ (գլորել):
Money will overturn mountains.

Առաջ պըլիկ (գրամ), ետքը տնիկ, ետքն ալ կնիկ:
First have money, then a house, and then a spouse.

Փարա չունեցողին կնիկը հարամ է:
He who has no money deserves no wife.

Փողը ձէն է տալիս:
Money talks.

Վերն Աստուած, վարը փարան:
Up in heaven – God; down on earth – money.

Փարա կ'ուզե՞ս ունենալ. քսակդ ծակ մի՛ պահիր:
If you want to be rich, keep your purse out of reach.

Նաղդ (կանխիկ) փողը հանած թուր է:
Cash money is a drawn sword.

Աւնողը գտնում է, ծախողը՝ կորցնում:
The buyer finds, the seller loses.

Պագարում ապրանքի հետ հոգի էլ է ծախւում:
At the bazaar, along with goods, they also sell souls.

Առուտուրը հէր ու մէր չունի:
Business does not know father or mother.

Մարդու մայր որ կորաւ, հոգին էլ կը կորի:
When someone's goods are lost, his soul is also lost.

Աղբէրութեան ատեն աղբօր պէս, առուտուրի ատեն՝ օտարի պէս:
In brotherhood like brothers, in business like strangers.

Ով արեւտուր չ'անի, ո՛չ կը կորցնի, ո՛չ կը գտնի:
He who doesn't trade, will neither lose nor gain.

Առուտուրը էն մարդու մօտից արա, որ հէրը նոր ա մեռել. եա
աղբօր մօտից, որ նոր ա բաժնուել:
*Buy goods from a merchant whose father has just died; or from his
(merchant's) brother who just split with him.*

Առուտուրը Աստծուն կը վայելի. թանկութիւնն էլ գիտի, էժա-
նութիւնն էլ:
*It's God who is suited for commerce; He knows what's costly and
what's cheap.*

Մալատիրոջ երդում չի հասնի:
A vendor is not supposed to vow.

Ծախողին մէկ աչքը բաւ է. առնողին հազարն ալ քիչ է:
For the vendor one eye suffices; for the buyer even a thousand won't.

Առնողին աչքը, ծախողին ձեռքը կ'ըլնի:
The eyes of the buyer are in the hands of the vendor.

Գետնէն ալ ստակ գտնաս նէ, համրէ ու առ:
Even if you find it on the ground, count the money first and then take it.

Թռչունը կուտով կը բռնեն, մարդը՝ արծաթով:
Birds are trapped with seeds, people with silver (money).

Ոսկի բեռով ջորուոյն առջեւ ամէն բերդի դռներ բաց են:
Every fortress will open its gates to a mule loaded with gold.

Ոսկին մութ տեղ լոյս կու տայ:
Gold casts light in the darkness.

Ոսկին ցեխի մէջ էլ կը փայլի:
Gold will shine even in mud.

Ոսկու արժէքը ոսկերիչը գիտի:
It's the goldsmith who knows what gold is worth.

Առանց խելքի, ունեցուածքը կեանք չունի:
Without brains, wealth won't last.

Արծաթը աղի ջուր ա. ինչքան խմես, կը ծարաւես:
Silver is like salty water: the more you drink, the thirstier you get.

Քեարն (չաճ) ու վնասը ընկեր են:
Gain and loss are friends.
[i.e., Gain and loss go together.]

Զհարէն (թոյն) կծու զարարն է:
It's the bitter loss which is a real poison.

Օգուտ չեղած տեղը անպայման վնաս կայ:
Where there is no gain, there will be loss without fail.

Առուտուր են ասել, չեն ասել առ-ու-կուր:
They said “take-and-give”; they didn't say “take-and-swallow.”
[Pun based on Armenian *առեւտուր* [arəvtour] or *առուտուր* [arəutour] for “commerce” which literally means: “take-and-give” and the compressed sentence *առ-ու-կուլ* [ar-ou-koul] for “take-and-swallow.”]

Պարտք, կաշառք, տոկոս ***Debt, bribery, interest***

Պարտքի դուռը բաց է:
The door of debt is open.

Պարտատիրոջ երեսը սեւ է, լեզուն կարճ:
A debtor's face is blackened with shame, his tongue is tied.
[i.e., A debtor is always abashed and reticent.]

Պարտքը կրակէ շապիկ է:
Debt is a burning shirt.

Պարտականի պարտքը պէտք է իր կարողութեան չափով լինի:
The debtor's borrowings should match his holdings.

Վատ պարտականէն հող ու մոխիր:
From a bad debtor (you'll get) earth and ash.

Պարտքի տակ մնալն ու քարի տակ մնալը մէկ է:
Being in debt is like being under rocks.

Տանելիս նոքար է, բերելուց աղա:
When he borrows it, he is a servant; when he returns it, he is a sir.
[About the behavior of a debtor]

Աղբէրն աղբօրն ասեց. «Առաջ մի հեսաբա տե՛ս, յետոյ աչքիս լոյսն ես»:
A brother said to his brother, “First settle my account, then be the light of my eye.”
[Armenian “light of my eye” for the English “apple of my eye”.]

Պարտքը որ կայ, տաւի (ուղտ) ճագ է, քանի պահես կը մեծանայ:
Debt is a camel’s young – the longer you keep it, the more it grows.

Պարտքդ որ հազարի հասաւ, ճուտով փիլաւ կեր:
When your debt gets up to a thousand, eat pilaf with chicken.*
[Expressing the cynicism of a lost cause]

Պարտքէն չվախեցողն Աստծուց չի վախենայ:
He who doesn’t fear debt, doesn’t fear God.

Արի՛ մեղքով, մի՛ գալ պարտքով:
Come with sins, don’t come with debts.

Կնկան հրիկը մարդն է, մարդու հրիկը պարտքն է:
The wife’s spouse is the man, the man’s spouse is his debt.

Պարտքը տալով, մեղքը լալով:
Paying debts, repenting faults.
[Said about people who are late in paying their debts]

Լուս լուսանայ, տէրը քաղցրանայ:
After dawn, the owner will calm down.
[Said about a seller’s tendency to mull over an offer during the night, before agreeing next morning.]

Կաշառքը դատաւորի աչքը կը քուռացնի:
Bribing will blind the eye of the judge.

Պարտքը լուս կը դառնայ, տուն կը մտնի, ուղտ կը դառնայ, չի
դուրս գայ:
Debt sneaks into the house like a flea, then becomes a camel and stays.

Շան բերանը ոսկոր գցես, կը սըսկուի (լուել):
Throw a bone into a dog's mouth and it shuts up.
[About the efficiency of bribery]

Կաշառքը միջնում էլ լոյս կը տայ:
Bribery lights up even the darkness.

Կաշառքը ուտողի աչքը կը քուռացնի:
Bribing will blind the eye of the bribed.

Լաւ տեղը կաշառք տուր, ներսը գցի՝ վատ տեղը կաշառք տուր,
դուրսը գցի:
*If you place the bribe with the right person, it's invested; if you place
it with the wrong person, it's wasted.*

Կու տայ հազարը, կ'ըլլայ պազարը:
You pay the bill (as a bribe), you get the deal.

Տուեց ոսկին, բերեց խօսքին:
He gave the gold, they did as they were told.

Սրբի դուռն էլ առանց խոռնկ ու մոմի չեն գնում:
Even to the saints you don't go without candle and incense.

Ցամաք գդալը բերանը չեն տանի:
You don't raise an empty spoon to your mouth.

Սուղ, աժան **Expensive, cheap**

Սուղէն աժանը չկայ:
Nothing is cheaper than the costly.

Թանգ բարին ստակը յետ կը բերէ:
Costly goods will bring back your money.

Էժան մսի խաշուն (արգանակ) չունը չի կերել:
Even the dogs won't eat the broth of cheap meat.

Թանգ ծախողը, էժան փնտռողը, գլուխը բաց կը մնայ:
He who asks high prices and he who seeks low prices will both go bare-headed.

Աժան բեքմեզը (ռուփ) մեղրէն անուշ է:
The cheap bekmez is sweeter than honey.*

Զրի քացախը մեղրէն անուշ է:
Free vinegar is sweeter than honey.

Էժան վախտը առնողի մէջը, թանգ վախտը ծախողի մէջը խղճմտանք չկայ:
He who buys when too cheap and sells when too costly has no heart.

Էչը որ խիարի (վարունգ) գինով առնես, մէկ օր ջրի մէջ խեղդուած կը տեսնես:
If you buy a donkey for the price of a cucumber, one day you will find it drowned.

Աժան բանը թանգ կը լմննայ, թանգը՝ աժան:
Cheap things end up expensive, and the expensive cheap.

Հարուստ չեմ, որ աժան բան առնեմ:
I am not rich enough to buy cheap things.



Chapter 11

ԿԵԱՆՔԻ ԴԱՍԵՐ LESSONS FROM LIFE

Themes

<i>Ամէն բան իր տեղն ունի</i>	201
<i>Everything has its place</i>	
<i>Ամէն բան իր չափն ունի</i>	201
<i>Everything has its limit</i>	
<i>Ամէն ինչ իր ընելու ձեւը ունի</i>	202
<i>There is a proper way of doing things</i>	
<i>Ամէն բան իր ժամանակին</i>	202
<i>Everything in its time</i>	
<i>Երբեմն շատ ուշ է</i>	204
<i>Sometimes it is too late</i>	
<i>Անցեալն անդարձ է</i>	204
<i>The past is irreversible</i>	
<i>Առանց պատճառի հետեւանք չկայ</i>	205
<i>There is no consequence without a cause</i>	
<i>Առիթը պէտք է օգտագործել</i>	206
<i>Opportunities must be taken</i>	
<i>Բնական ընթացքը դժուար է շեղել</i>	206
<i>It's hard to change the natural course of things</i>	
<i>Գէշէն գէշը կայ</i>	207
<i>Things can be worse than they were</i>	
<i>Գործն իր արդիւնքով կը գնահատուի</i>	208
<i>Everything is appreciated by its results</i>	
<i>Դիւրին վաստակը կայուն չէ</i>	208
<i>Easy come, easy go</i>	

Շինելու տեղ եղածն ալ կ'աւրեն	208
<i>One can destroy instead of repairing</i>	
Երեւոյթը կը յաջորդէ նախանշանին	209
<i>Events follow their signals</i>	
Լաւին հետ կու գայ նաեւ գէշը	209
<i>Good and bad come together</i>	
Լաւն ու պիտանին չեն կորսուիր	210
<i>The good and the useful do not perish</i>	
Լաւն ու գէշը գործին մէջ կ'երեւան	210
<i>Good and bad are seen at work</i>	
Որոշ բաներ չեն փոխուիր	211
<i>Some things do not change</i>	
Էականը աննշանին քով կը մոռցուի	211
<i>The essential is forgotten over the insignificant</i>	
Իւրաքանչիւրին իրեն եղածին համեմատ	212
<i>Everybody receives according to his worth</i>	
Որոշ բաներ անկարելի են	213
<i>Some things are impossible</i>	
Որոշ բաներ անվերականգնելի են	215
<i>Some things are irreparable</i>	
Չարիքին պատճառը իրեն խորքին մէջ է	215
<i>The cause of evil lies in its depth</i>	
Չնչինի ազդեցութիւնն ալ չնչին է	215
<i>The impact of the insignificant will be insignificant</i>	
Կարեւորը կամենալն է	216
<i>It is good will that counts</i>	
Ճշմարտութիւնը միշտ ընդունելի չէ	216
<i>Truth is not always welcome</i>	
Որոշ բաներ անխուսափելի են	216
<i>Some things are inevitable</i>	
Հազուագիւտ բաները յարգի են	217
<i>Rare things are valuable</i>	
Իրերը տարբեր նպատակներու կրնան ծառայել	218
<i>Things can be used for different purposes</i>	
Կորածին արժէքը մեծ կ'ըլլայ	218
<i>Lost things are priceless</i>	
Շատը միշտ չէ, որ լաւ է	218
<i>More is not always better</i>	

**Ամէն բան իր տեղն ունի
Everything has its place**

Աղօթքն իր տեղը, թուրն իր տեղը:
A prayer in its place, a sword in its place.

Ամէն խօսք իր տեղն ունի:
Every word has its place.

Տեղ կայ աղչելիք, տեղ կա փախչելիք:
There are places where you pray, from others you run away.

Արեւն իրա լոյսն ունի, լուսնեակն էլ իրանը:
The sun and the moon each have their own light.

Օձն ամէն տեղ կուռ կը քալէ, իր բունը չիտակ:
The serpent goes everywhere bent, but enters his hole straight.

**Ամէն բան իր չափն ունի
Everything has its limit**

Արջը ձագը շատ սիրելուն սխմրտեր խեղդեր է:
Out of love, the bear hugged its cubs to death.

Թելն որ բարակնայ, կը կտրի:
When the thread becomes thinner, it breaks.

Շատ ծիծաղը լաց կը բերէ:
Too much laughter brings tears.

Շաքարն անուշ ա, համա ամէն օր չի ուտուի:
Sugar is sweet, but you cannot eat it everyday.

Շատ մի՛ սիրի ատել կայ, շատ մի՛ ատի սիրել կայ:
Do not love too much, hate can grip you; do not hate too much, love can grip you.

Գառնով փլաւն էլ ամէն օր ուտել չի ըլլում:
Even pilaf with lamb you cannot eat everyday.*

Ուշ արի, նուշ արի:
Come rarely, but dearly.

Հաւը ղազի (սազի) հաւկիթ ածէ, կը պատռի:
If a hen lays a goose egg, she will rupture.

Կատուին փախածը, երդին մարագը:
What a cat has fled is no further than the shed.

Ամէն ինչ իր ընելու ձեւը ունի *There is a proper way of doing things*

Ծիտն ա ծառին գտնում, ոչ թէ ծառը ծտին:
It's the bird that finds the tree, not the tree the bird.

Դանակը կովին մօտ կը տանին, կովը դանակին մօտ չեն տանիր:
You take the knife to the cow, not the cow to the knife.

Մեղրը մատով, կակալը (ընկոյզ) հատով:
Honey with the finger, walnuts one-by-one.

Ամէն բան իր ժամանակին *Everything in its time*

Մարդս ժամանակին ա մնում, ժամանակը մարդուս չի մնում:
People depend on time, time depends on no one.

Ամէն բանի ժամանակը կայ:
There is a time for everything.

Ամէն բան վախտին (ժամանակ) կը նայի, վախտը բանի չի նայի:
Everything depends on time, time depends on nothing.

Ծառը ժամանակին պէտք է տնկես:
The tree must be planted at the right time.

Թոնիրը տաք-տաք հացը կողը կը տան:
Slap the lavash on the sides of the toneer* while it is hot.*
[Lavash* dough is rolled out and pressed against the hot walls of the toneer*.]

Կռուի օր կռիւ, հաշտութեան օր հաշտութիւն:
In wartime – war; in peacetime – peace.

Աքլորը, որ անժամանակ կանչէ, գլուխը կը կտրեն:
If the rooster crows out of time, they slaughter it.

Կարմիր ձուն Զատիկին կը սագի:
The red eggs are for Easter.

Ժամանակն մի անգին գանձարան ա, գինը իմացողին համար:
Time is a priceless treasure for those who know its worth.

Գառը գարնանը, ձիւնը ձմռանը:
The lamb in spring, the snow in winter.

Բանը էգուցուայ մնաց, իմացի՛ր՝ կորաւ գնաց:
What's postponed until tomorrow is lost forever.

Վախտը գայ նէ, քարէ տանձը կը հասուննայ:
With time, the stone-hard pear will ripen.

Էսօրուայ բանը չեն թողայ էգուցուայ:
Don't put off today's work til tomorrow.

Սահաթ սահաթին սազ չի գայ:
One hour does not match another hour.

Մինչեւ գարուն չգայ, ծառը չի ծաղկի:
Before spring, no tree will bloom.

Առանց ամառի պտուղ չի հասնի:
Before summer, no fruit will ripen.

Զմեռ չեկած, ձիւն չի գար:
Before winter, no snow will fall.

Օրը կու գայ, բարին հետը:
The day will come and the goodness with it.

Տղէն չեւած, անունը Շատարեւ կը դնեն:
They call the child “Shatarev” [a male name] before birth.

Երբեմն շատ ուշ է
Sometimes it is too late

Մինչեւ գլխուս կապելը սորվեցայ, էրիկս գնաց:
By the time I learned how to tie my kerchief, my husband left me.

Քանի կար, տուն չկար, որ մեռաւ, գմբէթ շինեցին:
While alive, he had no home; when he died, they built a dome.

Եզները կորչելուց յետոյ գոմը փակեցին:
After the oxen were lost, they closed the stall-doors.

Հարսանիքից յետոյ, դափ ու զուռնա^o:
After the wedding, (there is no use for) clapping and zurna?*

Մինչեւ աղն եկաւ, մատաղը վերջացաւ:
By the time the salt arrived, the matagh was finished.*

Մինչեւ առուի ջուրը գայ, գորտի աչքը դուրս կը գայ:
By the time water fills the pond, the frog has gone to the great beyond.

Յետ Զատիկին, հալւան էժանագին:
After Easter, the halva is cheap.*
[Halva* is part of Easter's festive meals.]

Գնա մեռի՛ր, եկո՛ւր սիրեմ:
Go and die, come back and I will love you.

Անցեալն անդարձ է
The past is irreversible

Մեխի (գամ) զարկած տեղը միշտ կ'երեւայ:
Where a nail was driven, there will always be a hole.

Եղած բանին «չնորհաւոր» կ'ասեն:
If something is over and done with, you say "Congratulations!"
[i.e., What you cannot change, you accept.]

Եղածն եղած է:
What happened, happened.

Անցկացածը ետ չի գալ:
The past does not come back.

